

ՍՈՒՐԻԱ ԿԱԶՉԱՅԻ ՀԻՒԱՆՊԱՆՈՅԻՆ ՀՐԹԻՈՒԿՈՇՈՒՄԸ ԴԱՐՈՒՄ ՄԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԾ ԱՄԵՆԱՎԱՅՐԱԳ ՈՃԻՐՆԵՐԷՆ ՄԵԿԸ ՀԱՄԱՐԵՅ

Սուրիոյ Նախագահութիւնը հանդէս եկաւ հետեւեալ հաղորդագրութեամբ. «Կազգայի Մասամատանի հիւանդանոցին դէմ Իսրայէլի գործած ոճիրը դարուս մարդկութեան դէմ իրազորուած ամենավայրագ ոճիրներէն մէկն է: Սուրիոյ Հանրապետութիւնը Կազգայի մէջ հարիւրաւոր անմեղ քաղաքացիներու սպանողը ցեղասպանութիւն կը համարէ:



Այս սպանողը մեզ կը վերոյիշեցնէ Իսրայէլի այն ոճիրները, որոնք հիմնուած են ցեղասպանութեան ծրագրաւորման վրայ:

Սուրիոյ Հանրապետութեան Նախագահութիւնը արեւմտեան պետութիւնները, յատկապէս ԱՄՆ պատասխանատու կը համարէ այս ոճիրին, որովհետեւ ան Իսրայէլի իւրաքանչիւր ռազմական գործողութեան մեղսակիցն է»:

ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ԵՌՈՐԵԱՅ ՍՈՒԳ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԷՅԱՒ

Սուրիոյ կառավարութիւնը եռօրեայ սուգ յայտարարեց 17 Յոկտեմբեր 2023-ին, Իսրայէլի կողմէ Կազգայի «Մասամատանի» հիւանդանոցին հրթիռակոծման հետեւանքով զոհուած Նահատակներուն հոգւոյն:



Սուրիոյ Հանրապետութեան բոլոր շրջաններուն, ինչպէս նաեւ արտերկրի մէջ սուրիական դեսպանատուներուն եւ դիւանագիտական հաստատութիւններուն մէջ սուրիական դրօշը կիսով չափ պիտի իջնէ:

ԵՒՐՈՒՍՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ «ՄԵՆՔ ԱՆՎԵՐԱՊԱՀ ԱԶԱԿՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵՔ ՀԱՅՏԱՍՆԻ ԱՆԿԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՐԱԾԵԱՅԻՆ ԱՄԲՈՂԱՎԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆԽԱՏՏԵԼԻՈՒԹԵԱՆ»

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ աշխատանքային այցելութեամբ կը գտնուի Պրիւքսէլի մէջ, Եւրոպական Միութեան խորհրդարանի Նախագահ Ռոպերթա Մեցոլայի հետ մամլոյ միացեալ ասուլիսով հանդէս եկած է:

Ռոպերթա Մեցոլան յայտնած է, որ անվերապահ աջակցութիւն կը յայտնէ Հայաստանի անկախութեան, տարածքային ամբողջականութեան եւ սահմանային անխախտելիութեան:



«Մեր ուշադրութիւնը պետք է կեդրոնացնենք ազնիւ, արդար եւ խաղաղ բանակցութիւններու վրայ, կոչ կ'ուղղենք Լեռնային Ղարաբաղի մէջ յարգելու հայերու իրաւունքներն ու անվտանգութիւնը:

Միջազգային հանրութեան գործուն մասնակցութիւնը եւ Լեռնային Ղարաբաղի մէջ բնակող հայերու համար միջազգային երաշխիքները կրնան օգնել խաղաղութեան ու հաշտեցման: Մենք հաւատարիմ կը մնանք բոլոր այն ջանքերուն, որոնց նպատակն է ՀՀ-ի ու Ատրպէյճանի յարաբերութիւններու կարգաւորման՝ ինչը ունենալով ՀՀ-ի ու Ատրպէյճանի անկախութեան, սահմաններու անխախտելիութեան եւ տարածքային ամբողջականութեան ճանաչումը», ըսած է Մեցոլա:

ՅԱԿՈՒԲ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ. «ԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԶԵՆՊԻՆԻ ՄԵՉԻ ՊԱՐՏԱԳՐՈՒՂ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ»

ՀՀ-ի Հայ Դատի Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Քանադայի, Հարաւային Ամերիկայի եւ Աւստրալիոյ յանձնախումբերու ու գրասենեակներու ներկայացուցիչները 14 եւ 15 Յոկտեմբերին հաւաքուած էին Ուաշինկթընի մէջ՝ վերանայելու Արցախի եւ Հայաստանի Հանրապետութեան շուրջ ստեղծուած իրավիճակին մէջ իրենց մարտավարական առաջնահերթութիւններն ու քննարկելու ընթացիկ աշխատանքները:



Սուրիոյ Հանրապետութեան մէջ 14 Յոկտեմբերին տեղի ունեցած քննարկման ժամանակ ելոյթ ունեցած է ՀՀ-ի Բիւրոյի ներկայացուցիչ, ՀՀ-ի Հայ Դատի կեդրոնական խորհուրդի Նախագահ Յակոբ Տեր Խաչատուրեանը:

«Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար ոչ մէկ ձեւով այս ճակատագիրը ընդունելի է: Կորսուածը՝ ճակատամարտն էր, իսկ պատերազմը եւ պայքարը կը շարունակուին: Մենք Նահանգել չենք գիտեր», ըսած է Տեր Խաչատուրեան:

Իր ելոյթին մէջ ան ընդգծած է ստեղծուած աղետալի իրավիճակին մէջ հայ ժողովուրդի իրաւունքներուն համար պայքարը սոր ուժով ու սոր շեշտաւորումներով շարունակելու կարեւորութիւնը:

تحت رعاية أمين فرع جامعة حلب
لحزب البعث العربي الاشتراكي
الرفيق الدكتور إبراهيم حديد
 وبمباركة المطران مكارم اشكاريان
مطران طائفة الأرمن الأرثوذكس أبرشية حلب و تواجعا
يقيم نادي الشبيبة السورية الثقافية
بالتعاون مع الاتحاد الوطني لطلبة سورية
الأسبوع الثقافي الأرمني
بعنوان
البصمة الأرمنية
الذي سيقام في رحاب جامعة حلب
٢٠٢٣ - ٢٤ - ٢٢ تشرين الأول

<p>اليوم الأول ١٢:٠٠ ظمرا افتتاح معرض الثقافة الأرمنية محاضرة بعنوان الأرمن على ضفاف البحر الأسود يلقيها الدكتور سركيس بورتزسيان</p>	<p>اليوم الثاني متابعة المعرض الثقافي كلية الطب البشري قاعة ابو بكر الرازي</p>
<p>اليوم الثالث ١٢:٠٠ ظمرا مسرحية بعنوان الجذور تابعة لنادي الشبيبة السورية الثقافية أمسية احتفالية مع المطرب فاهه عندما أن المعرض سيستمر طيلة فترة الفعالية من الساعة ١١:٠٠ حتى ١٥:٣٠</p>	<p>مدرج الباسل بالقرب من كلية الهندسة المدنية مدرج الباسل بالقرب من كلية الهندسة المدنية</p>

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԱՐՑԱՆ ԵՒ ԿԱԶՁԱ... ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՈՏՆԱՅԱՐՈՒՄ

Արցախի ժողովուրդը աւելի քան 9 ամիս պաշարելու ու ցեղասպանության ենթարկելով բռնի գաղթի մղելու, անոր մշակութային հարստությունը խեղաթիւրելու ու տնտեսական կարելիություններուն տիրանալու Ատրպեյճանի ծրագրուած ու անպատիժ մնացած ոճիրին կը յաջորդէ Կազգայի բնակչութեան ուղղուած սպանդն ու բռնի տեղահանութեան Իսրայելի ոճիրը:

Կազգայի հիւանդանոցի սարսափելի հրթիռակոծումը ցընցեց ողջ աշխարհը:

Միւս կողմէ, Ատրպեյճան ձերբակալելով Արցախի պետական աւագանին, հրապարակային դատավարութիւնը կատարելով 75-ամեայ արցախցի Վաքիֆ Խաչատրեանի, կը ջանայ Արցախի պետականութեան հաստատման գաղափարը ամբողջովին արժեզրկել ու ահաբեկչական շարժումի վերածել ինքնորոշման միջազգային իրաւունքի կիրարկումով ու քուէարկութեամբ հաստատուած Արցախի հանրապետութեան կերտման իրողութիւնը:

Միթէ՞ ահաբեկչական շարժման կազմակերպիչներու հետ կը բանակցեր ԵԱՀԿ Մինսքի խումբը 30 տարի շարունակ:

Փաստօրէն աշխարհը ակնատեսը կը դառնայ բռնապետի մը հրապարակային ցուցադրութիւններուն, երբ Ատրպեյճանի նախագահը մտնելով Ստեփանակերտ եւ հասնելով մինչեւ Արցախի նախագահական գրասենեակ, կը ջանայ արհամարհել Արցախի պետականութեան 30 տարուան գործունէութիւնը, որ աւելի ժողովրդավարական էր քան Ատրպեյճանինը, ու հրապարակին մէջ կանգնելով ասպարէզ կը կարդայ ժողովրդավար աշխարհին:

Անտեսելի չեն նաեւ Թուրքիա-Ատրպեյճան զօրավարժութիւններու կազմակերպումը, յատկապէս այս օրերուն: Փաստօրէն երկու երկիրները կը ծրագրեն իրենց յառաջիկայ զինուորական գործողութիւնները՝ միեւնոյն ատեն խաղաղութեան օրակարգի մասին խօսելով ու քաղաքակիրթ աշխարհին աչքին փոշի ցանելով:

Թուրքիոյ նախագահը մէկ կողմէ կը դատապարտէ Կազգայի հիւանդանոցին վրայ յարձակումը, միւս կողմէ Իսրայելի դաշնակից Ատրպեյճանի հետ ծրագիրներ կը մշակէ՝ Ատրպեյճան-Իսրայել գործակցութեան պատկերին լոյսին տակ:

Խաղաղութիւն...


Վերջին տարիներուն Կովկասի եւ Միջին Արեւելքի մէջ ծաւալող պատերազմները խաղաղութիւնը անիրականանալի խաղաքարտի մը վերածեցին պարզապէս՝ բռնագրաւելու երկիրներ, ոտնահարելու իրաւունքներ ու անպատիժ թողելու բռնապետներ:

Խաղաղութիւնը արդարութեան վրայ հիմնուելով միայն կայուն կը դառնայ: Պատմութեան ո՞ր էջին մէջ հանդիպած ենք ցեղասպանութեամբ ու բիրտ ուժով պարտադրուող խաղաղութեան:

Այս բոլորը կրկին կը հնչեցնեն ազգերու, ժողովուրդներու ներքին ամրութեան, պետութիւններու հզօր պաշտպանողականութեան ձգտելու մարտահրաւերը, առանց որոնց անիրականանալի պիտի մնան խաղաղութեան ցանկութիւնները:

«Գ.»

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին հեռաձայնային հաղորդակցութեամբ խորհրդակցեցան Կազգայի դէմ խրայելեան գրոհը կասեցնելու միջոցներուն շուրջ:



Նախագահները շեշտեցին Կազգայի քաղաքացիներուն մարդասիրական օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ Իսրայելի հրթիռակոծման ու բռնագաղթի սպառնալիքին դադրեցման կարելիութիւնը:

-Սուրիոյ արտաքին գործոց փոխնախարար Պասսամ Սապպաղ նախագահ Պաշար ալ-Ասատին դիմաց երդման արարողութիւն կատարեց:



Յետ երդման արարողութեան, նախագահ Ասատ ընդունեց Սապպաղը եւ յաջողութիւն մաղթեց անոր ստանձնած նոր պաշտօնին մէջ:

Արարողութեան ներկայ գտնուեցաւ Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ:

-Պաղեստինեան Առողջապահութեան Նախարարութիւնը յայտարարեց, որ Կազգայի դէմ խրայելեան գրոհին 12-րդ օրը 3478 նահատակ եւ աւելի քան 12.000 վիրաւորներ արձանագրուեցան:

Պաղեստինեան Ազգային Դիմադրութիւնը Կազգայի յարակից «Ներամ» կեդրոնը հրթիռակոծեց:



Պաղեստինի ԱԳ նախարար Ռիատ Մալքի յայտնեց, որ Իսրայել մտադրած էր «Մամատանի» հիւանդանոցը հրթիռակոծել եւ նախապէս փոխանցած էր հիւանդանոցի տնօրէնութեան այդ մէկը:

Ան շեշտեց, որ Կազգա ցեղասպանութեան կ'ենթարկուի եւ անոնք, որոնք Իսրայելի կ'աջակցին զէնքեր տրամադրելով, մեղսակից են Պաղեստինի ժողովուրդին դէմ իրագործուած ոճիրին ու պատասխանատուութիւն կը կրեն:

-Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան ընդհանուր տնօրէն Թետրոս Ատիանով Կեպրեսոս, շեշտեց, որ Կազգայի իրավիճակը հսկողութենէ դուրս պիտի գայ:



Ան յայտնեց, որ պէտք է անմիջապէս Կազգա մուտք գործել, որպէսզի մարդկային օգնութիւնները հասանելի դառնան ժողովուրդին, աւելցնելով, որ մարդասիրական օգնութիւններու հասանելիութեան ուշացման իւրաքանչիւր վայրկեան մարդկային վնասները կը բազմանան:

-Իսրայելեան ուժերը հրթիռակոծեցին Կազգայի «Մամատանի» հիւանդանոցը, որուն հետեւանքով աւելի քան 500 նահատակ եւ հարիւրաւոր վիրաւորներ արձանագրուեցան:

Պ ա ղ է ս տ ի ն ե ա ն լրատուամիջոցներ հաղորդեցին, որ հիւանդանոցը կ'ընդգրկէր վատառողջ հարիւրաւոր մարդիկ եւ վիրաւորներ, ինչպէս նաեւ հազարաւոր պաղեստինցի տեղահանուածներ, որոնց բնակարանները քանդուելէն ետք այնտեղ ապաստանած էին:



Լրատուամիջոցները աւելցուցին, որ հարիւրաւոր պաղեստինցիներ տակաւին փլատակներու տակ են:

Լուրեր Հայաշխարհին

ԵՆԽՎ-Ը ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ԿՈՉ ԿՈՒՂԵ ԱՉԱՏ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԱՐՅԱԽԻ ԲՈԼՈՐ ԿԱԼԱՆԱԽՐՈՒԿԱԾ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՆ ՈՒ ՀԱՅ ՊԱՏԵՐԱՉՄԱԿԱՆ ԳԵՐԻՆԵՐԸ

Եւրոպական խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը (Այսուհետեւ՝ ԵՆԽՎ) 12 Յոկտեմբերին որդեգրեց «Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական կացութիւն» բանաձեւը եւ համանուն խորհրդատուութիւնը:

Բանաձեւը կը դատապարտէ 19 Սեպտեմբեր 2023-ին Արցախի դէմ Ատրպէյճանի գինուորական գործողութիւնները:

Վեհաժողովը կը շեշտէ, որ Արցախի գրեթէ ամբողջ բնակչութիւնը լքած է իր հայրենիքը ֆիզիքական ոչնչացման վտանգի եւ Ատրպէյճանի կառավարութեան երկարամեայ հայատեաց քաղաքականութեան հետեւանքով:

Վեհաժողովը նկատել կու տայ, որ գոյութիւն ունին ցեղային գտումներու իրականացման հիմնաւոր կասկածներ:

Վեհաժողովը կը հաստատէ, որ ցեղային գտումներու իրականացումը՝ իբրեւ գինուորական կամ մարդկութեան դէմ յանցագործութիւն, կրնայ յանգեցնել անհատական քրեական պատասխանատուութեան:

Վեհաժողովը Նախարարներու յանձնախումբին կողմէ կ'ուղղէ ձեռնարկելու Ատրպէյճանի նկատմամբ դիտարկման հոլովոյթի՝ հիմք ընդունելով Եւրոպական խորհուրդի անդամ երկիրներու կողմէ ստանձնուած յանձնարարութիւններու կատարման վերաբերեալ 1994 թուականի հռչակագիրը:

Կոչ կ'ուղղէ՝ Նախարարներու յանձնախումբին եւ Խորհրդարանական Վեհաժողովին միջեւ լրացուցիչ միացեալ ընթացակարգ սկսելու՝ ի պատասխան Ատրպէյճանի կողմէ կանոնադրական պարտաւորութիւններու լուրջ խախտման:



Կը յայտնէ, որ Ատրպէյճանի՝ իր պարտաւորութիւնները չկատարելու պարագային Վեհաժողովը այլ ընտրութիւն պիտի չունենայ, քան 2024 թուականին ԵՆԽՎ առաջին նստաշրջանի ընթացքին վիճարկել Ատրպէյճանի պատուիրակութեան ժողովին լիազօր ձայնով մասնակցութիւնը:

Վեհաժողովը կ'անդրադառնայ վերջին երկու շաբթուան ընթացքին աւելի քան 100.600 հայերու կողմէ Լեռնային Ղարաբաղը լքելու փաստին, կ'արձանագրէ ատոր պատճառները՝ 19 Սեպտեմբեր 2023-ին Ատրպէյճանի սկսած գինուորական գործողութիւնները եւ ատոր նախորդած Բերձորի միջանցքի փակման հետեւանքով ստեղծուած ճգնաժամը:

Վեհաժողովը խորապէս համոզուած է, որ Արցախի բնակչութեան ողբերգական արտագաղթը պէտք չէ ընդունիլ իբրեւ նոր իրականութիւն:

Իբրեւ Եւրոպական խորհուրդի անդամ երկիր՝ Ատրպէյճանը պէտք է պահպանէ հաւատարմութիւնը կազմակերպութեան հիմնական արժէքներուն եւ դրսեւորէ պատրաստակամութիւն՝ միջազգայնօրէն ստանձնած պարտաւորութիւնները կատարելու համար:

Վեհաժողովը յղում կը կատարէ Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանի 22 Փետրուար 2023-ին որդեգրած որոշումին՝ Ատրպէյճանի նկատմամբ միջանկեալ քայլերու կիրարկման վերաբերեալ եւ Ատրպէյճանին կոչ կ'ուղղէ՝ անյապաղ զանոնք կատարելու:

Վեհաժողովը հասցեական կոչ կ'ուղղէ Ատրպէյճանին ձեռնարկելու անյապաղ քայլերու՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան վերադարձը ապահովելու եւ անոնց իրաւունքները պաշտպանելու համար:

Վեհաժողովը Ատրպէյճանին կոչ կ'ուղղէ ապահովելու շրջանի հայկական մշակութային ժառանգութեան պաշտպանութիւնը:

Ատրպէյճանին կոչ կ'ուղղուի ազատ արձակելու Լեռնային Ղարաբաղի բոլոր կալանաւորուած ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Ատրպէյճանի մէջ պահուող բոլոր հայ պատերազմական գերիները:

Բանաձեւը կ'անդրադառնայ իրենց հայրենիքէն Լեռնային Ղարաբաղի հայերու բռնի տեղահանման պատճառով յառաջացած ծանր մարդասիրական կացութեան եւ կ'ընդգծէ Զայաստանին աջակցելու անհրաժեշտութիւնը, ներառեալ Եւրոպական խորհուրդի գործողութիւններու միջոցով:

Վեհաժողովը խորապէս համոզուած է, որ երկարամեայ եւ ողբերգական տագնապը կրնայ լուծուիլ միայն խաղաղ ճամբով, երկխօսութեան եւ բարի կամքի միանշանակ ազդանշաններու միջոցով, կիրարկելի միջազգային իրաւունքի հիման վրայ՝ լիակատար յարգանք ցուցաբերելով այնտեղ ապրող իւրաքանչիւր մարդու իրաւունքներուն նկատմամբ:

Վեհաժողովը Ատրպէյճանին կոչ կ'ուղղէ ամեն ինչ ընելու՝ ցոյց տալու համար դրացի Զայաստանի հետ խաղաղ ապրելու պատրաստակամութիւնը:

Վեհաժողովը կ'ակնկալէ, որ թէ՛ Զայաստան, թէ՛ Ատրպէյճան յարգեն իրարու տարածքային ամբողջականութիւնն ու գերիշխանութիւնը, ինչպէս նաեւ սահմաններու անձեռնմխելիութիւնը՝ հիմք ընդունելով 1991 թուականի Ալմա Աթայի հռչակագիրը:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՐՁԱԳԱՆԳԱԾ Է ԵՆԽՎ-Ի ԲԱՆԱՉԵԻՆ ՈՒ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻՆ

Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը դատապարտած է Եւրոպական խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵՆԽՎ-ի) որդեգրած «Լեռնային Ղարաբաղի մէջ մարդասիրական կացութիւնը» բանաձեւը:

«Մենք վճռակամօրէն կը մերժենք եւ խստօրէն կը դատապարտենք Եւրոպական խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի 2023 թուականի Յոկտեմբեր 12-ի թիւ 2517 (2023) բանաձեւը եւ թիւ 2260 (2023) խորհրդատուութիւնը: Այս կառոյցը անգամ մը եւս ցուցադրած է Ատրպէյճանի նկատմամբ անաչառ մօտեցում ցուցաբերելու անկարողութիւնը», յայտարարած է Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը՝ աւելցնելով,



որ ԵՆԽՎ-ն կը շարունակէ «անհիմն խօսակցութիւններու եւ շրջանի որոշ երկիրներու նենգ քաղաքականութեան» վրայ հիմնուած մօտեցում ցուցաբերել՝ Ատրպէյճանը նսեմացնելու համար:

Ըստ Պաքուի, փաստաթուղթը «ակնյայտօրէն կը հակասէ Եւրոպական խորհուրդի հիմնական որոշումներուն եւ փաստաթուղթերուն: Աւելին, ինչպէս կը պնդէ Պաքու, «հակահարեւելեան գործողութեան յանգեցուցած իրադարձութիւններու խեղաթիւրուած մեկնաբանութիւնն ու Ատրպէյճանի կողմէ մարդասիրական օրէնքի յարգումն ու տեղւոյն հայ բնակչութեան իրաւունքներու պաշտպանութեան համար ձեռնարկուած քայլերու անտեսումը կը վկայեն Ատրպէյճանի նկատմամբ ԵՆԽՎ-ի երկարաժամկետ կանխակալ վերաբերմունքի մասին»:

«ԵՆԽՎ-ի անհիմն պնդումները Լաչինի ճամբով վերջին տասը ամիսներու ընթացքին տեղաշարժելու վերաբերեալ եւ Արդարադատութեան Միջազգային Դատարանի համապատասխան որոշումներու սխալ մեկնաբանութիւնը՝ նոյն ատեն անտեսելով անոր 2023 թուականի Յուլիս 6-ի որոշումը, որ միաձայնութեամբ մերժած էր Լաչինի շրջանի վերաբերեալ Զայաստանի հայցերը, անընդունելի են: Աւելին, շուրջ 4000 անհետ կորած Շար. 19 6

ՈՒՄՇԻՆԿՐԸՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ Է ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ ԵՒ ԱՄՏՐԱՆՈՅ ՀԱՅ ՊԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԵՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԱԺՈՂՈՎ

ՅՅԴ Բիւրոյի Յայ Դատի Կեդրոնական գրասենեակը կը հաղորդէ, որ Արցախի եւ Զայաստանի Զանրապետութեան շուրջ ստեղծուած իրավիճակին մէջ Յայ Դատի յանձնախումբերու մարտավարական առաջնահերթութիւններու վերանայման եւ ընթացիկ աշխատանքներու քննարկման նպատակով 14-15 Յոկտեմբերին Ուաշինկթընի մէջ կատարուած է Յայ Դատի Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Քանադայի, Զարաւային Ամերիկայի եւ Աւստրալիոյ յանձնախումբերու խորհրդաժողով: Խորհրդաժողովը հիւրընկալած էր Յայ Դատի Ամերիկայի յանձնախումբը:

Խորհրդաժողովի բացման խօսքին մէջ ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ, Յայ Դատի կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեանը կարեւոր նկատած է ստեղծուած աղետալի իրավիճակին մէջ հայ ժողովուրդի իրաւունքներուն համար պայքարը նոր ուժով եւ նոր շեշտաւորումներով շարունակելու կարեւորութիւնը եւ այն վիթխարի պատասխանատուութիւնը, որ Յայ Դատի յանձնախումբերն ու գրասենեակները կը կրեն:



Տէր Խաչատուրեան նկատած է, որ ստեղծուած իրավիճակին մէջ յուսահատութիւնը կրնայ առաջնորդել նոր աղէտներու, ուստի համազգային մակարդակի վրայ ընկճուածութեան յարթահարումն ու պայքարի ուժգնացումը այլընտրանք չունին, եւ որ այս խորհրդաժողովը պատշաճ հարթակ է սպառնացող մարտահրաւերները քննարկելու եւ Զայաստանի ու Արցախի իրաւունքներու պաշտպանութեան շուրջ անհրաժեշտ առաջնահերթութիւնները ճշգրտելու ուղիութեամբ:

Խորհրդաժողովի ընթացքին քննարկուած է Յայ Դատի քաղաքական առաջնահերթութիւններու մարտավարական վերանայման եւ գործունեութեան հիմնական ուղիութիւններու վերայստակացման ուղղուած օրակարգային հարցերու լայն շրջանակ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍՔԻ ԲԱՆՏՈՐՈՇ ԿԱՅՐԿԵԱՆԸ


Կարո Արմենյան

Արցախը չկայ: Ան խլուած է ոչ միայն մեր հայրենիքի հողային ամբողջականութենէն, այլև – այլ մանաւանդ – մեր երկրէն: Այսօր խոցուած ենք ազգովին եւ կ'ապրինք ջարդուած խղճմտանքով:

Եւ հետեւաբար այսօր է ժամը հարց տալու, թէ գործօններէն ո՞րն է այն վճռորոշ գործօնը, որ ներկայ կացութեան մէջ կրնայ կասեցնել եւ ետ շրջել մեր կեանքի գահավէժը եւ մեզ վերստին դնել – թէկուզ այս ուշ ժամուն – ուժական ընթացքի մէջ:

Աշխարհաքաղաքական արցանք, որուն մէջ կը գտնուի հայ պետականութիւնը այսօր, անսխալընթացօրէն դաժան է: Ան կը պահանջէ նոր մղուքեր, նոր գէնքեր, նոր գորաշարժ, նոր ռազմավարութիւն: Ան կը պահանջէ նոր գիտութիւն սպառնալիքներու բնոյթին մասին եւ նոր յանձնարարութիւն՝ թշնամին դիմագրաւելու եւ գայն գգտնելու: Պիտի յստակօրէն գիտնանք, թէ ո՞վ է թշնամին, ի՞նչ է թշնամին, ո՞ւր է թշնամին: Զարկ կա՞յ կրկնելու, որ այս կողմին ռազմաճակատը կ'երկարի Սիւնիքէն մինչեւ Մոսկուա եւ մինչեւ աշխարհի հեռաւոր անկիւնները:

Մեր «ռազմավարական դաշնակից»-ը, որպէս այդպիսին, չքացած է շրջանի ռազմաբեմէն: Ռուսաստանի ազգային գերագոյն շահերը այժմ կը ներկայացուին Մոսկուայի մէջ ամրացած Փութինեան վարչախումբին կողմէ, որ միաժամանակ գործընկերային խորունկ շահերով կապուած է Ալիեւի ֆինանսական կայսրութեան եւ այս վերջինին օրկանապէս մաս կազմող Թուրքիոյ եւ Իսրայէլի շահացանցերուն: Այսօր ցաւով կ'ընդգծեմ, որ այս կէտին վրայ, ռազմաբեմին վրայ գործող Ռուսաստանի ազգային մեծապետական շահերը չեն այլեւս, այլ Մոսկուայի իշխանական հաստատութեան (establishment) խմբակային եւ անձնական շահերը՝ որոնք խախտած են աշխարհաքաղաքական խաղաքարտերու դասաւորումը շրջանին մէջ եւ փոխաձեռնութեամբ Կովկասի ու ժային քարտէզին:



Որքան ալ խօսակարծային (paradoxical) թուի պարագան, պիտի ընդունինք, որ Ռուսաստանը ինքզինք չի ներկայացնէր այլեւս: Փութին է, որ կը ներկայացնէ Ռուսաստանը... Եւ այդ իսկ է հարցը: Վճռողը Ռուսաստանի ռազմավարական հեռահաս շահերը չեն այլեւս, այլ Փութինեան համակարգի յատուկ շահերը (special interests), որոնք անպայման նոյնը չեն: Յամենայն դէպս նոյնը չեն Ռուսաստանի կենսական շահերու տեսանկիւնէն: Ըստ էության այս գանձագանութիւնը լրջօրէն հաշուի առնելով է միայն, որ կարելի է ճիշտ գնահատական տալ հայկական կողմի ներկայ ճգնաժամին եւ փոխընդունութիւններուն:

Ըստ էության խաչաձեւման այս փաստը նաեւ ամրագրուած է Փութինի եւ Ալիեւի միջեւ ստորագրուած եւ 43 կէտերէ բաղկացած Փետրուար 24, 2022 թուակիր Մոսկուայի համաձայնագրով, որ բացայայտօրէն ճանաչում կու տայ Ատրայեճանի տարածքային ամբողջականութեան ինքնաբերաբար հաստատելով նաեւ որ Արցախը մաս կը կազմէ իշխելու ամբողջականութեան: Զանգամա՛նք՝ որ բացայայտ հակասութեան մէջ է Արցախի կարգավիճակի խնդրով ԵԱՀԿ-ի Մատրիտեան Գագաթաժողովի կողմէ հաստատուած սկզբունքներուն հետ, որոնց դարբիններէն մէկը նոյնիսկ Ռուսաստանն էր:

Փութին-Ալիեւ համաձայնագիրը նաեւ կը յստակացնէ, որ կողմերը պիտի յարգեն մէկ մէկու ռազմավարական շահերը Կովկասի խնդիրներու կապակցութեամբ: Իրականութեան մէջ, Փութինն է, որ յատուկ տեղ պիտի տայ Ալիեւի քաղաքականութեան հրամայականներուն Կովկասի մէջ: ԱՅՍ ԱՌՈՒՄՈՎ, ՄՈՍԿՈՒԱ Ի ՅԱՆԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՇԱԽԵՐՈՒ ՄԵՇ ԱՌԱԿԵԼՈՒԹԵԱՄԲ ՄԸ ԿՕԺՏԵ ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ԶԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԶՐԵԼՈՎ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՒ ԱՊԱԳՈՐԾՕՆ (dysfunctional) ԴԻՐՔԵՐՈՒ ՎՐԱՅ: Պէտք է գիտակցինք այս դառն ճշմարտութեան եւ ընդունինք, որ ներկայիս չունինք ռազմավարական դաշնակից, քանի որ ան (երկար առնէն ի վեր) առեւանգուած է (hijacked) Փութին-Ալիեւ յարաբերութիւններու նոր դաշինքին կողմէ: Զտեւաբար ինչո՞ւ գարմանալ, երբ Փութին իր համամտութեան կնիքը կը դնէ Արցախի ինքնիշխանութեան խնդրին վրայ լիովին իւրացնելով Ալիեւի թեզերը եւ շնականօրէն (սինիգմով) վկայակոչելով Փաշինեանի բարբառաւանքները որպէս հիմ Մոսկուայի նոր կողմորոշման: Ինչո՞ւ գարմանալ, երբ Մոսկուայի աչքերուն առջեւ Ալիեւ դժոխքի կը վերածէ Արցախը (եւ գայն բռնի կը հայաթափէ) լայնօրէն օգտագործելով Մոսկուայի (եւ Թուրքիոյ եւ Իսրայէլի եւ Արեւմուտքի) կողմէ հայթայթուած զինատեսակներն ու ռազմա-արհեստագիտական տեղեկոյթը:

Այս բոլորէն պէտք չէ հետեւցնել, որ Մոսկուա կը պատրաստուի հրա-

ժարիլ իր Կովկասեան դիրքերէն եւ գանոնք յանձնել Ալիեւի եւ Երտողանի: Ո՛չ: Այս կէտին վրայ, դժուար է բնորոշում տալ Մոսկուայի հեռահար փոխընդունութիւններուն Կովկասի մէջ: Կը տարուի մտածելու, որ անոնք դեռ յստակ չեն նոյնիսկ Փութինի համար: Մոսկուայի establishment-ը – ի տարբերութիւն կայսերական Ռուսաստանի – կը թուի մտածել եւ գործել անէլի կարճաժամկետ հորիզոնով: Առայժմ պարզ է միայն մէկ բան: Ներկայի Մոսկուայեան հաստատութիւնը ուժեղ շահադրոյշներով (incentives) իր գրաւը դրած է ԱԼԻԵՎԻ ՎՐԱՅ՝ հայկական կողմը լքելով իր ճակատագրին: Եւ ասոր առաջին գոհը փաստօրէն Արցախն է եւ Արցախի մեր ժողովուրդը:

Մոսկուայի հաշուարկին մէջ, հայկական կողմը այլեւս չունի տարածաշրջանային գործօնի կարգավիճակ: Իսկ Ատրայեճանը՝ անպայման ունի: Ան անվիճելիօրէն կը վայելէ «մրցակցային առաւելութիւն» Յայաստանի վրայ: Զայաստանը կորսնցուցած է խօսակցի իր արժեքը Փութինի եւ Մոսկուայի համար: Մոսկուայի իրական խօսակցները Կովկասի մէջ Ալիեւն ու Երտողանն են այսօր: Եւ անպայման՝ Իրանը:

Միւս կողմէ Մոսկուան կը գիտակցի, որ թուրքեւատրայեճանական գործօնը Կովկասի մէջ թէ՛ սպառնալիք է իր տարածաշրջանային շահերուն եւ թէ՛ երաշխիք՝ իր խմբակային շահերու ապահովման: Բարդ հիւսուածք մը՝ որմէ խուսափելու ձեւ չունի ան այլեւս: Այսօր, Մոսկուայի խնդիրն է ճիշդ կառավարել այս երկուութիւնը: Այսինքն՝ միաժամանակ «սիրելատել» ու այս սիրախա՛ղը (love-hate relationship): Եւ այդ նուրբ եւ լարծուն գործին համար եւ Փութինեան Մոսկուայի դիրքերէն՝ Զայաստանն ու Արցախը շահեկան են միայն որպէս «ամուծախ»-ի խաղաքարտ: Յամենայն դէպս՝ ո՛չ որպէս Ռուսաստանի մեծապետական շահերու կենսական յենարան:

Այս ականուած փոխյարաբերութիւններու համատեքստին մէջ է, որ Ալիեւ կրցաւ «գնել» Մոսկուայէն (ա) 44-օրեայ պատերազմի իր յաղթանակը հայկական տարածքներու լայնածաւալ իւրացումներով, (բ) հայկական ռազմով ջանդէլու «արտօնութիւն»-ը, (գ) Արցախն ու Զայաստանը պատանդելու «իրաւունք»-ը, (դ) Մոսկուայի դռները հայ դիւանագիտութեան առջեւ փակելու պատեհութիւնը եւ (ե) Սիւնիքի քաղաքական ապագան պայմանաւորելու մեծ կարելիութիւնը: Այսինքն՝ հայկական ներկայութիւնը տարածաշրջանի բեմէն քաղաքականօրէն չքացնելու համաձայնութիւնը... Եւ այս գործարքը դեռ մեր չէ գտած:

Ասիկա հսկայ ոստիւն մըն է Ալիեւի եւ Թուրքիոյ համար տարածաշրջանի սակարկութիւններու սեղանին վրայ: Ատրայեճան այժմ կը տիրապետէ բոլոր կենսական խաղաքարտերուն: Ըտրեւիդ Ալիեւին ձեռքն է: Ըտրեւիդ մանաւանդ Երտողանի ձեռքն է (եւ Իսրայէլի): Կարելի է միայն պատկերացնել, թէ ի՞նչ փոխարժեքի դիմաց՝ Կրկնեմ՝ ողբերգութիւնը այն է, որ Մոսկուան՝ ի՛նչքը լայնօրէն պատանդուած է իր նեղ շահակցական ոլորտի գործօններով, երբ հարցը կը վերաբերի Զայաստանին ու Արցախին: Պատանդուած է Ալիեւի կողմէ: Որ կը նշանակէ՝ Թուրքիոյ եւ անուղղակիօրէն Իսրայէլի:

Այս բոլորէն ետք, կարելի է տակաւին պնդել, որ տարածաշրջանի աշխարհաքաղաքական բեմին վրայ Ռուսաստանի եւ Զայաստանի միջեւ ԲՆԱԿԱՆ դաշնակցի (natural ally) յարաբերութիւնները կը մնան ի գօրու, թէեւ սառեցուած՝ Փութինեան վարչակարգին (եւ Փաշինեանի) կողմէ: Պէտք է ենթադրել, որ Ռուսաստանի ազգային գերագոյն շահերը տակաւին կապուած են Ռուսաստան-Զայաստան-Իրան հիւսիս-արաւ առանցքին, որ ի վերջոյ պէտք է ինքզինք պարտադրէ տարածաշրջանի իրականութեան: Եթէ ճիշդ է այս վարկածը, Ռուսաստան պէտք է ի վերջոյ վերականգնէ իր գերագոյն շահերու անզիջելիութիւնը փանթուրքիստական մնայուն սպառնալիքին դիմաց: Ընդունինք եւ սակայն նաեւ հարց տանք՝ Ե՞րբ... Եւ ինչպե՞ս:

Այդ մէկը կ'ենթադրէ Ռուսաստանի ներքին քաղաքական դաշտի արմատական յեղաշրջում եւ արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններու հիմնական փոփոխութիւններ: Այդ մէկը կ'ենթադրէ Ռուսաստանի ուժային գերակայութեան վերականգնում իր ծայրամասային գօտիներուն մէջ: Եւ, անշուշտ, հարց է թէ ո՞վ կրնայ գլխաւորել այսօր յարացոյցի նման փոփոխութիւն մը Ռուսաստանի քաղաքական բեմին վրայ... (Յամենայն դէպս՝ ոչ Փութինը): Եւ անպայման հարց պէտք է տալ, թէ իսկապէս ի՞նչ կ'արժեն այս թեական ակնկալութիւնները Ռուսաստանէն այսօրուան մեր մեծ ճգնաժամին դէմ յանդիման: Վայրկեանները կարելոր են մեզի համար եւ անոնք համրուած են: Անոնք մեր կենսական տարածութիւնն են այսօր, որ սարսափելիօրէն նեղ է: Մենք մխիթուու ժամանակ են լուսանցք չունինք այլեւս:

Մենք պիտի չմոռնանք, որ բնական դաշնակցի յարաբերութիւնները, իրենց հում վիճակին մէջ, դեռեւս դաշնակցային չեն: Անոնք տարերային բնոյթ ունին եւ հետեւաբար անոնց վրայ կարելի չէ քաղաքականութիւն ձեւաւորել առանց գանոնք քու ձեռքերուդ մէջ առնելու եւ գանոնք իսկապէս խմորելու: Չանոնք պէտք է տեւաբար մշակել, իմաստաւորել, հարստացնել, այժմեացնել, վերասահմանել իրերու զարգացման ամեն մէկ հանգրուանին վրայ: Բնական դաշնակցի յարաբերութիւնները պէտք է վերածուին ամենօրեայ գործօն յարաբերութիւններու եւ կենսածեփ, որպէսզի վերածուին լծակային ուժականութեան: Ալիեւ այս խաղին մէջ մտաւ «տկարութեան» դիրքերէ, բայց կրցաւ Ռուսաստան-Զայաստան բնական դաշնակցի յարաբերութիւններու դարպասը փուլ բերել եւ մեզմէ առաջ անցնիլ... Ինչո՞ւ եւ ինչպե՞ս:

Այստեղ է, որ իր բացարձակ մերկութեանը մէջ կը բացայայտուի այն ճակատագրական աղետը, որ կը կոչուի Փաշինեանական համակարգ: Ան

Սկզբ՝ էջ 4

պարագայական երեւոյթ մը չէ հայ պետականութեան կեանքին մէջ: Ան եկած է կազմակերպելու հայ անկախ պետականութեան հետեւողական կազմաքանդումը: Այս կետին վրայ, հայ անկախ պետականութիւնը կազմաքանդման սուր մարտահրաւերներու առջեւ կը գտնուի ոչ միայն դուրսէն, այլ մանաւանդ ներսէն: Դուրսի եւ ներսի սպառնալիքները այս պարագային կը գործեն ՄԻԱՏԵՂ եւ գիրար կ'ուժականացնեն հետզ հետեւ անպարտելի դարձնելով թշնամին:

Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ Փաշինեանական համակարգը գործիքակազմն իսկ է վերոյիշեալ ռազմավարութեան, որուն տերերը արտաքին ուժերն են եւ գլխաւորաբար Թուրքիան: Զետեւաբար ազգին առաջնահերթ խնդիրն է այսօր ձեռքբաւորել իր կենսական ուժականութիւնները կազմալուծող այս իշխանութենէն: Ներկայիս, իշխանութեան վրայ գըտնուող վարչակարգը (եթէ ուզէ իսկ) չի կրնար լուծում բերել երկրի լինելիութեան խնդիրներուն: Ան պետք է դուրս գայ իշխանութեան դիրքերէն, եթէ ազգը պիտի կարողանայ վերստին տեր կանգնիլ իր ճակատագրին: Իսկ կեանքը ցոյց տուաւ, որ այդ մէկը դիւրաւ յաղթահարուող թիրախ մը չէ այս կետին վրայ:

Փաշինեանական համակարգը - Նոյնիսկ անկախ իր դիտաւորութիւններէն - կը մշտնջենաւորէ պարտութեան ռեժիմը Զայաստանի մէջ եւ անգործութեան կը մատնէ մեզ Զայրենիքի եւ Սփիւռքի մէջ: Այս իրավիճակը կարելի դարձաւ 44-օրեայ Պատերազմի թուրքատարապէյճանական ռազմավարութեամբ եւ գործն աջակցութեամբ Փութինեան Մոսկուայի: Եւ սակայն այն իրողութիւնը, որ Փութինեան Մոսկուան - իր նեղ շահերէն ելլելով - մաս կազմեց հայկական կողմի պարտութեան գործընթացին, ամբողջովին չի բացատրեր հայկական գործնի քայքայման հողովոյթը:

Այստեղ կարելոր է, որ քննարկման ենթարկենք Արեւմուտքի դերակատարութեան խնդիրը:

Հակառակ պատմական ջերմ եւ բազմաշերտ յարաբերութիւններուն, Արեւմուտքի առաջնահերթութիւնները Զայաստանի նկատմամբ միշտ ալ պառակտուած են տարածաշրջանային հակասական շահերու գործունեւորով: Ասկա ճիշտ է մանաւանդ այսօր: Արեւմուտքի գործընկերը Կովկասի մէջ Թուրքիան է եւ վերջինիս արբանեակ՝ Ատրպէյճանը: Տասնամեակներու ընթացքին, Թուրքիան ինքզինքը հաստատեց, որպէս Նախորդի գլխաւոր խարիսխը Միջին Արեւելքի մէջ եւ Ռուսաստանի ամենէն զգայուն սահմանագծերուն վրայ: Թուրքիոյ կշիռը անգերագանցելի է եւ անփոխարինելի՝ Արեւմուտքի տարածաշրջանային քաղաքականութեան բոլոր եական ճակատներուն վրայ: Այս փաստը կարելի չէ անտեսել որեւէ պայմանով: Արեւմուտքը բուն վեճեր կրնայ ունենալ Թուրքիոյ յաջորդական իշխանութեանց եւ անհատ ղեկավարներուն հետ (ունի՛ր Երտողանի հետ), բայց Թուրքիան փոխարինող այլ ուժ, որպէս ռազմավարական գործընկեր, գոյութիւն չունի տարածաշրջանին մէջ:

Դարձեալ, անկախ այն բանէն, թէ Արեւմուտքի ղեկավարներն ու դիւանագետները ի՞նչ հաւաստիքներ կու տան Զայաստանի եւ Սփիւռքի իրենց խօսակցիներուն, Արեւմուտքի փոխընտրութիւնները ի սկզբանէ կաշկանդուած են Զայաստանի հետ յարաբերութիւններու ոլորտին մէջ: Այս հանգամանքը պիտի չփոխուի կանխատեսելի ապագային:

Արեւմուտքի դիտաւորութիւնները Կովկասի մէջ ներկայիս խթանուած են մէկ կողմէ Ռուսաստանը հակակշռելու եւ զայն տկարութեան դիրքերու վրայ դնելու հրամայականէն, իսկ միւս կողմէ՝ Իրանը շրջափակելու առաջնահերթութենէն: Զեռակայ հաշուով՝ նաեւ Չինաստանի ճանապարհները խափանելու անհրաժեշտութենէն: Այս ճակատներուն վրայ, Արեւմուտքը պետք ունի Թուրքիոյ, Ատրպէյճանի եւ Իսրայէլի: Այս կետին վրայ, յիշեալ փոխ-կապուածութիւնը այնքան սուր է եւ կենսական, որ Արեւմուտքի ղեկավարութիւնը պատրաստ է Նոյնիսկ աչք գոցելու Զայաստանի եւ Արցախի նկատմամբ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի ցեղասպան քաղաքականութեան վրայ: Եւ բացէ ի բաց գօրավիճ կանգնելու Իսրայէլի բնաջնջումի գործողութիւններուն Կազայի մէջ: Արեւմտեան ճատրակախաղի դիրքերէն՝ Թուրքիան, Ատրպէյճանը եւ առաջին հերթին՝ Իսրայէլը «գոհելի» չեն: Բոլոր միւսները - ներառեալ՝ հայերը, քիւրտերը, պաղեստինցիները - «գոհելի» են: Զայաստանը կրնայ հռչակուիլ որպէս Արեւմտեան քաղաքակրթութեան գոհարը, բայց ան չի դադիր Արեւմուտքի կողմէ «գոհելի» ըլլալ:

Այս առումով եւ իրերու ներկայ դրութեան մէջ, հայկական կողմը վըստահելի բարեկամ չունի աշխարհակարգի կառոյցներ: Չունի որեւէ իրական ԱՐՏԱԶԻՆ յենարան իր լինելիութեան ճարտարապետութիւնը կարենալ կառուցելու համար: Չունի մանաւանդ այն պատճառով, որ հայկական կողմը՝ ի՞նչ լայնօրէն գրկուած է որպէս աշխարհաքաղաքական յենարան հանդէս գալու իրական կարելիութիւններէն այսօր: Ան այլեւս ոչինչ ունի ղեկիք սեղանին որպէս խաղաթուղթ: Փաշինեանական համակարգը փճացուցած է բանակցային հակակշիռներու մեր գիտականատեղը: Աշխարհակարգի ուժերը տեղաւորուած են Կովկասի ռազմաքաղաքական վրայ իրենց նեղ շահերէն դրողաւ: Շահեր՝ որոնք իրերու ներկայ դրութեան մէջ սերտօրէն առնչուած են մեր թշնամիներու շահերուն եւ պատրաստ են իրենց առեւտուրը ընելու մեր հաշուին: Իսկ մենք ոչինչով կրնանք հակադարձել: Մեր բոլոր լծակները Փաշինեանական համակարգին կողմէ յանձնուած են թշնամիին:

Այս բոլորն է կը հետեւի, որ մենք՝ ինքներս շատ գործ ունինք ընելիք մեր կացութիւնը բարելաւելու ճակատին վրայ: Շատ գո՛րծ՝ տարածաշրջանի խաղաքարտերը կրկին ի նպաստ մեզի վերադասաւորելու մարզին մէջ:

ճակատագրի բնական ընթացքով՝ մենք այլեւս տեղ չունինք տարածաշրջանին մէջ: Մեր տեղը մենք ինքներս պիտի բանակը մեր իսկ մագիլներով: Եւ հանճարով:

ՄԵՐ ԱՆԵԼԻԶԸ

Պետք է սկսիլ այն բանէն, որ մեր պատմական հայրենիքը մեզի չի կըրնար պատկանիլ, եթէ մենք զայն ամէն օր եւ ամէն գնով մերը չընենք: Զասկնալ պատմութիւնը եւ տիրութիւնը մեր պատմական յիշողութեան՝ կենսական մէկ մասն են մեր իրաւագիտակցութեան, բայց անոնք դեռ շատ հեռու են մեր այսօրուան հարցերուն լուծում բերելէ:

Աշխարհակարգը չոր եւ անողորմ յարաբերութիւններու խաղաղաշուն է, ուր կը գործեն կայսերական շահերը: Ժողովրդավարութիւններ չկան այս ոլորտին մէջ: Բարի դրացնութիւնները մակերեսային խօսոյթներ են: Անոնք կը ծածկեն միջ-պետական յարաբերութեանց իրական գործունեւորը: Ժողովուրդներու միջեւ մշակութային ջերմ կապերը կը զարգանան, երբ անոնք - որպէս ինքնիշխան պետականութիւններ - արդէն ապահոված են իրենց տեղերը աշխարհակարգի տրամաբանութեան մէջ:

Աշխարհաքաղաքական տարածաշրջան մը ինքնիշխան եւ միաժամանակ մեկգմէկ կախեալ պետութիւններու համակարգ մըն է: Շղթայ մը՝ բազմաթիւ օղակներով: Երբեք պետք չէ մոռնալ շղթայական համակարգերը ղեկավարող յայտնի օրէնքը: Շղթայի մը գօրութիւնն ու դիմացկունութիւնը հաւասար է իր ամենէն տկար օղակի տարողութեան: Նոյն օրէնքը կը գործէ նաեւ տարածաշրջաններու ներքին տարերայնի (dynamics) գործընթացներուն մէջ: Տարածաշրջան կոչուող աշխարհաքաղաքական շղթան երբեք չի հանդուրժեր տկար օղակները: Տարածաշրջանային հաւասարակշռութիւնները կը հաստատուին աշխարհաքաղաքական «շղթայ»-ին ամենէն տկար օղակներուն հաշուին: Շղթան կը լուծարէ տկար օղակները շղթայի լինելիութիւնը ապահովելով:

Այս առումով, պետք է հարց տալ, թէ արդե՞ք անյոյս է հայ անկախ պետականութեան պարագան Զարաւային Կովկասի աշխարհաքաղաքական ռազմաքննի վրայ:

Այն իրողութիւնը, որ ներկայիս մենք մեզ կը գտնենք մեծապէս ակախուած կացութեան մը մէջ, երբեք չի նշանակեր, որ փակուղային է մեր վիճակը: Որպէս ընդհանուր սկզբունք՝ իրավիճակ մը փակուղային է, երբ մենք՝ ինքներս մեր մտքերը դրած ենք փակուղիի մէջ... կամ թոյլ տուած՝ որ անոնք փակուղիի մէջ դրուին ուրիշներու դաւադրական միջամտութեամբ: Բան մը՝ որ վերջին պատերազմի էութիւնն իսկ էր:

44-օրեայ Պատերազմին նպատակը հայկական կողմի ռազմական պարտութիւնը չէր միայն: Ան ծրագրուած էր հոգեբանական պատերազմի մասնագետներուն կողմէ անգործութեան մատնելու մեր ժողովուրդին միտքը եւ յատկապէս անոր վերնախաւի քաղաքական միտքը: Նպատակն էր թշնամիի ռազմական յաղթանակը վերջնականօրէն ամրագրել ազգը բարոյապէս եւ քաղաքականապէս անդամալուծելով: Պարզ խօսքով, մղելով մեզ հաւատալու՝ որ աշխարհակարգի կառոյցին մէջ տեղ չկայ հայ անկախ պետականութեան համար: (Դո՛ւրս Պեռլինէն... վերադարձէ՛ք Պոլիս:)

Բարեբախտաբար իրականութիւնը այդպէս չէ: Աշխարհակարգը ձեւաւորող կայսերական ուժերը եւ առաջին հերթին՝ ԱՄՆ, Ռուսաստան, Եւրոպա, Թուրքիա, Իրան եւ Իսրայէլ անճրկելի գանգուածներ չեն: Անոնք կ'ապրին ներքին քաղաքական հակասութիւններով եւ կնճիռներով: Անոնք բոլորն ալ ունին աքիլէսեան կրունկներ... Անոնք բոլորն ալ ենթակայ են սակարկութեան:

Մեր խնդիրն է մտնել այդ բարդ տիեզերքէն ներս ազդու գէնքերով: Այս առումով, եթէ մեր լինելիութեան սպառնացող վտանգը կայսերական է իր բնոյթով, ուրեմն մեր հակադարձութիւնն ալ պիտի ունենայ Նոյն կայսերական որակները: Զայ գիտնալով՝ որ ռազմադաշտին մէջ գործողը լոկ գէնքերը չեն: Չինտրոները չեն: Այլ այդ բոլորը համադրող եւ համակարգող լծակային ուժերը (leverage):

Ըստ Զայկական Սովետական Զանրագիտարանին, լծակը (lever, levier) այն գործիքն է - ինչպէս Խրիմեան Զայրիկի երկաթ շերտփը... - որմով փոքրագոյն ուժով կարելի է հակակշռել մեծագոյնը:

Ներկայիս այդ կարողականութիւնները կը գտնուին սխալ ձեռքերու մէջ: Լծակային կարողականութիւնները մեր երկրին մէջ խլուած են Փաշինեանական համակարգին կողմէ եւ անոնք կը հակակշռեն ԱԶԳԻՆ ուժը փոխանակ հակակշռելու ուժը թշնամիին... Մե՛ր թշնամին տարածաշրջանի ճակատագիրը ճշդող միջ-կայսերական ուժերու համակարգն է, որ կեցած է Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ետին: Իսկ Փաշինեանական համակարգի թըշնամին - իրերու տարերային դասաւորումով - ԱԶԳԻՆ է... Առակս ի՞նչ ցուցանէ:

Առակս ցուցանէ այն՝ որ ազգը իր մէջ պիտի գտնէ անհրաժեշտ կամքն ու ուժը ինքնիր վախերն ու թուլակամութիւնը յաղթահարելու եւ Փաշինեանական համակարգը արագօրէն ու վճռականօրէն դուրս բերելու իշխանութեան դիրքէն: Առանց այդ վիրահատութեան, այսինքն՝ առանց լիարժեք իշխանափոխութիւն իրագործելու, ոչինչ կրնայ կատարել մեր հաւաքական գահավժժը: Իշխանափոխութեան գործը առաջին շփման գիծն է մեր լինելիութեան պատերազմին: Առանց այդ ճակատագրական հանգրուանը նուաճելու ոչինչ կարելի է իրագործել: Առանց այդ ճակատամարտը շահելու՝ մենք ինքնաբերաբար կ'ընդունինք աշխարհակարգի վճիռը պատմութեան բեմէն միանգամընդմիջտ դուրս դրուելու:

Իսկ այդ վճռական գրոհը կը պահանջէ բոլորովին նոր ռազմավարութիւն, նոր տեսիլք եւ անսահման քաջութիւն անկոխ գետններէն հաշուի նստելու թշնամիին հետ: Տեր ընդ մեզ:

Թուրքիոյ նուրջ

Թուրքիան երկու սարիով երկարագոյն տարածքներու ստիւն շօքը դրպելու ժամկետները

Թուրքիոյ խորհրդարանի գլխաւոր նիստին ընդունուած է Նախագահ Էրտողանի ստորագրութեամբ յուշագիրը, ուր կը նշուէր, որ Իրաք եւ Սուրիա գօրծ դրկելու ժամկետը կ'երկարաձգուի երկու տարիով եւս:

Յուշագիրին մէջ յատկապէս կը նշուի, որ Թուրքիոյ հարաւային, ցամաքային սահմաններու ազգային ապահովութեան սպառնացող վտանգներն ու սպառնալիքները կը շարունակեն աճիլ:



Կը նշուի, որ Թուրքիա մեծ նշանակութիւն կու տայ դրացի Իրաքի տարածքային ամբողջականութեան, ազգային միասնութեան՝ կայունութեան պահպանման:

Յուշագիրին մէջ կը նշուի նաեւ, որ Թուրքիոյ կողմէ ահաբեկչական համարուող Իրաքի քրտական կազմակերպութեան եւ ՏԱՅԵՇ խմբաւորման տարրերու շարունակական գոյութիւնը, ցեղային հիմքերով անջատողականութեան նախաձեռնութիւնները ուղիղ սպառնալիք են տարածաշրջանային խաղաղութեան, կայունութեան՝ Թուրքիոյ անվտանգութեան համար:

Իսկ Սուրիոյ Թուրքիոյ հետ հարող տարածքներուն քրտական շարժումները սպառնալիք են Թուրքիոյ ապահովութեան:

Բացի ատկէ կ'ընդգծուի, որ վերոնշեալ յուշագիրը կենսական նշանակութիւն ունի Թուրքիոյ ազգային անվտանգութեան համար:

Փոխին եւ Էրտողան շեռնաձեռնութիւն ընդունանք Սիզիս արեւելի ՏԱԳՆԱՊԸ

Տեղի ունեցած է Թուրքիոյ Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի եւ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի հեռաձայնային հաղորդակցութիւնը: «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանը կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Թուրքիոյ Նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու բաժինը:



Չրոյցի ընթացքին պետութիւններու ղեկավարները քննարկած են Իւրայէի եւ Պաղեստինի տագնապի ընթացքը, ատոր դադրեցման ուղիները եւ շրջանին մէջ մարդասիրական կարիքները բաւարարելու կարելիութիւնը:

Էրտողան ըսած է, որ իրեն կը մտահոգեն քաղաքային բնակավայրերու վրայ կատարուած յարձակումները:

Թուրքիոյ Նախագահը ընդգծած է, որ իր երկիրը պիտի փորձէ կարելին ընել շրջանին մէջ խաղաղութիւն ապահովելու համար:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 3

ատրպէյճանցիներու ճակատագիրի վրայ լոյս չսփռելը, ականներու սպառնալիքը, որ 44-օրեայ պատերազմէն ետք գոհերու թիւը հասցուց 333-ի, եւ նախապէս բռնագրաւուած ատրպէյճանական տարածքներուն մէջ արձանագրուած ակտներու չափը խորապէս մտահոգիչ են», արձանագրուած է հաղորդագրութեան մէջ:

Պաքուի պնդումով՝ «Եւրո-Արաբիայի պաշտպանելով հայերու իրաւունքները գոյութիւն չունեցող սպառնալիքներէն, կ'անտեսէ Գայաստանէն վտարուած ատրպէյճանցիներու իրաւունքներու վերականգնման եւ արձանագրուած վերադարձի կոչերը»:

Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարութիւնը յայտարարած է, որ Եւրո-Արաբիայի պետք է «դադրեցնէ Ատրպէյճանի դէմ ուղղուած անհիմն եւ կանխակալ քայլերը», որոնք «կը խաթարեն Ատրպէյճանի եւ Գայաստանի միջեւ խաղաղութեան ջանքերու հեռանկարները»:

«Միեւնոյն ժամանակ, Եւրոպական խորհուրդի մեքանիզմները Ատրպէյճանի դէմ օգտագործելու անհեռատես փորձերը ամբողջովին հակաարդիւնաւետ են եւ չեն կրնար խաթարել Ատրպէյճանի վճռակալութիւնը՝ շարունակելու գործել շրջանին մէջ կայուն խաղաղութեան ապահովման եւ Ատրպէյճանի Դարաբաղի շրջանի հայ բնակչութեան վերահասարկման ծրագիրներու յանաջմովման ուղղութեամբ», ըսուած է Արտաքին Գործոց Նախարարութեան հաղորդագրութեան մէջ:

ԵՆԻՍԿ-Ը...

Սկիզբ՝ էջ 3

Վեհաժողովը կոչ կ'ուղղէ բաւալու շրջանային կապուղիները՝ երկիրներու գերիշխանութեան, տարածքային ամբողջականութեան հիման վրայ եւ ազգային իրաւասութեան ծիրին մէջ: Այս ծիրին մէջ վեհաժողովը կ'ընդգծէ, որ Նախիջեւանի հետ հաւանական կապը չի կըրնար գործարկուիլ Գայաստանի կամքին հակառակ եւ ի վնաս Գայաստանի ազգային շահին:

Վեհաժողովը կ'ակնկալէ Ատրպէյճանի իշխանութիւններու համաձայնութիւնը՝ կազմակերպելու միջազգային կառոյցներու բարձր մակարդակի փաստաւորաբար այցելութիւններ:

Վեհաժողովը կը գտնէ, որ իրումն Եւրոպայի խորհուրդի համապատասխան հաստատութիւններու եւ մարմիններու շրջան մուտք գործելու հրատապ անհրաժեշտութեան, Ատրպէյճանի իշխանութիւնները պետք է կանոնաւոր կերպով Եւրոպական խորհուրդի ընդհանուր քարտուղարին եւ Նախարարներու յանձնախումբին տրամադրէ լիարժեք եւ մանրամասն տեղեկատուութիւն ձեռնարկուած կամ նախաձեռնուելիք քայլերու վերաբերեալ, որոնք նախատեսուած են պաշտպանելու եւ ընդլայնելու Զեպակափրով նախատեսուած շրջանի հայերու իրաւունքները եւ ազատութիւնները՝ ներառեալ անվտանգութիւնը անոնց, որոնք վերադառնալու ցանկ

կութիւն կը դրսեւորեն:

Խորհրդարանական վեհաժողովը կը հրաւիրէ Նախարարներու յանձնախումբը հրատապ քայլերու ձեռնարկելու՝ հասցեագրելու Լեռնային Դարաբաղի գրեթէ ամբողջ հայ բնակչութեան արտագաղթը, անոնց վրայ ազդող մարդասիրական ու մարդու իրաւունքներու ճնշմամբ:

Խորապէս մտահոգուած կացութեամբ, որ ցեղային գտնումներու բազմաթիւ կասկածներ կը յառաջացնէ:

ՈՒՄՆԻԿՈՐԵՆԻ...

Սկիզբ՝ էջ 3

Խորհրդաժողովը մեծ կարեւորութեամբ շեշտած է Արցախի ժողովուրդի բռնի տեղահանման հետեւանքով ստեղծուած ազգային ճգնաժամը դիմակայելու հրամայականը: Ըննարկուած են Արցախէն բռնի տեղահանուած մեր հայրենակիցներուն համար արժանապատիւ կեցութեան եւ կենցաղի պայմաններու ստեղծման միջազգայնօրէն օժանդակելու հակաճգնաժամային խնդիրները: Այս քննարկուած են նաեւ Արցախի Զանապետութեան պետականութեան հիմնական սիւներու պահպանութեան եւ հետագայ աշխատանքներուն վերաբերեալ հարցերը: Առանձին ուշադրութիւն դարձուած է Գայաստանի Զանապետութեան անվտանգութեան պաշտպանութեան, ատրպէյճանական հաւանական ռազմական նախադրանքներու կանխման ուղղուած աշխատանքներուն, ներառեալ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան նկատմամբ պատժամիջոցներու կիրարկման անհրաժեշտութիւնն ու այդ ուղղութեամբ Գայ Դատի յանձնախումբերու եւ գրասենեակներու աշխատանքները: Գայ անկախ պետականութեան համար անհրաժեշտ արտաքին օժանդակութիւն ապահովելը եւ Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութեան միջազգային քաղաքական եւ իրաւական պատասխանատուութեան ենթարկելը պիտի շարունակեն մնալ Գայ Դատի յանձնախումբերու գործունէութեան կարեւորագոյն ուղղութիւններէն:

Ժողովականները հաստատած են, որ Գայաստանի իշխանութիւններուն շարք մը դիրքորոշումները յաճախ կ'օգտագործուին ատրպէյճանաթրքական պետական շրջանակներու եւ լոպիիստներու կողմէ՝ Գայ Դատի յանձնախումբերու ու գրասենեակներու աշխատանքներուն հակազդելու համար: Անոնք կ'օգտագործուին նաեւ իրենց հակահայ հայեացքներով յայտնի օտարագրի քաղաքական գործիչներուն կողմէ:

Խորհրդաժողովի ընթացքին քննարկուած են նաեւ ատրպէյճանաթրքական լոպիիստական կառոյցներու աշխատանքներուն հակազդելու, ինչպէս նաեւ Գայ Դատի յանձնախումբերու ու գրասենեակներու կարողականութեան շարունակական ընդլայնման եւ երիտասարդութեան ներգրաման համայնքային աշխատանքներուն ուղղուած նախաձեռնութիւններ եւ ծրագիրներ:

Պրիմակետ

«ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԽԱՂԸ»



Մարուշ Երամյան

Տարիներ առաջ էր որ կարդացեր էի անգլիացի վիպասան Ճոն Ֆոուլ-գի մեկ վեպը՝ «Մոգը» (The Magus) և որագրով:

Վեպը վրաս ծանր տպավորություն գործած էր ոչ միայն իր բարդ հանգոյցներով և լուծումով, այլ նաեւ որովհետեւ կը խօսեր նոր աշխարհի մը դրուածքին մասին:

Այդ օրերուն աշխարհին նոր, տարբեր ըլլալը տակաւին չէինք գգացած, ոչ ալ անոր պատկերացումը ունէինք:

Երբ նոր կ'ըսեմ, ընդհանրապէս կը խօսիմ մարդկային սկզբունքներու մասին, որոնք դարեր շարունակ առաջնորդեր են մարդը, մինչ անկէ շեղողները - ընդհանրապէս ուժի դիրքերու վրայ եղող կայսրեր, թագաւորներ եւ այլն - բացառութիւն կը կազմեն: Մարդիկ կ'ապրեն մարդկային սկզբունքներով եւ կը տառապեն անոնցմէ զառաժողներուն՝ այդ «բացառութիւններուն» պատճառով: Ժողովուրդները իրենք էին որ կը փոխանցէին այդ սկզբունքները սերունդէ սերունդ:

«Մոգը» վեպը կը պատմէ անգլիացի երիտասարդ ուսուցիչի մը մասին, որ կը հրաւիրուի յունական փոքր կղզիի մը՝ Ֆրաքսոսի դպրոցին մէջ դասաւանդելու (Phraxos, որուն նախատիպարն է Spetses կղզին, ուր հեղինակը դասաւանդած է 1950-1952 տարիներուն): Այս երիտասարդը ոչ մէկ ձեռով կապուած է իր ծննդավայրին՝ չունի ծնողք, եղբայր-քոյրեր, կին եւ զաւակներ, կայուն աշխատանք:

Դպրոցին մէջ տարօրինակ դէպքեր կը պատահին, որոնք կը սկսին խախտել իր հոգեկան անդորրը: Վերջաւորութեան, երբ ամէն բան կը բացայայտուի եւ ուսուցիչը սարսափած կը հարցնէ.



–Բայց ինչո՞ւ:

Այդ դէպքերուն ետին կեցող անձը, որ կղզիին տերն է, շատ պարզ ձեւով կը բացատրէ.

–Երբ խելացի ես, հարուստ եւ գեղեցիկ, ոչինչ կ'արգիլէ որ ուզածներդ ընես. մարդիկ խաղալիքներ կը դառնան մեզի համար:

Յեղինակը գիրքին վերջաւորութեան դրուած հարցազրոյցին մէջ կ'ըսէ, թէ նախապէս ուզած է վեպը «Աստուածային Խաղը» կոչել (The God Game) եւ զոչացեր է, որ այդ որոշումը փոխեր է:

Խաղ. Աստուածային խաղ. Չօրհարներու խաղ, որոնց խաղալիքները մարդիկ են: Եւ ոչ ոք, բացարձակապէս ոչ ոք զիրենք կ'ամբաստանէ, պարզապէս որովհետեւ ... ուժեղ են:

Գիրքը գրուած է 1965 թուականին: Յեղինակը պայծառատեսութիւն ունեցեր է, թէ՞ փաստացի տուեալներ վիպականացուցեր է, գոնէ ես չեմ գիտեր: Նոյնիսկ իմ կարդացած օրերուս, գիրքին լոյս տեսնելէն քառորդ դար ետք իսկ, տակաւին չէինք գիտեր թէ կեանքը դէպի ո՞ր կ'երթայ, տակաւին հաւատք ունէինք Միացեալ Ազգերու Կազմակերպութեան վրայ, մարդկային սկզբունքներուն վրայ, արդարութեան վրայ: Տակաւին կը հաւատայինք որ բոլոր յանցանքները իրենց հատուցումը պիտի ունենան:

Ճիշդ յիսուն տարի ետք ամէն բան փուլ կու գայ. կը յայտնաբերենք, թէ բնութեան աղէտներն իսկ մարդկային միտքին եւ ձեռքին գործերն են ...

Այս վեպէն ճիշդ յիսուն տարի ետք, կրկին կը յիշեմ կարդացածս եւ ունեցած ծանր տպավորութիւնս:

1993-1994-ի Սուտանի սովի օրերուն լուսանկար մը մեծ տարածում գտաւ միջազգային լրատուական գործակալութիւններուն քով եւ ամբողջ աշխարհի մէջ, Զեվին Գարթըր լուսանկարիչը (Kevin Carter) աշխարհահռչակ դեմք մը դարձաւ:

Լուսանկարը կը ներկայացնէ սուտանցի շատ փոքր աղջնակ մը, որ ճամբուն վրայ սովէն տկարացած մարած ինկած է: Զիչ անդին անզո մը համբերութեամբ կը սպասէ որ աղջնակը մեռնի, իր խրախճանքին սկսելու համար:

Գարթըրի հետ եղած հարցազրոյցներէն մէկուն ընթացքին, *աազկին* մը հարց կու տայ աղջնակին մասին.

–Եւ ի՞նչ եղաւ փոքրիկը, որ կարծեմ դէպի պարէնի կեդրոն կ'ուղղուէր...

–Չեմ գիտեր, – կը պատասխանէ Գարթըր, – կ'աճապարէի օդակայան հասնելու համար:

–Ուրեմն նկարին մէջ երկու անզո կան, մէկը՝ գամերայով: Կ'ըսեն թէ քանի մը ամիս անց, Գարթըր, չդիմանալով իր խղճի խայթին, անձնասպան կ'ըլլայ:

Պարզ, սովորական հարցում մը պէտք էր, որպէսզի Գարթըր անդադառնար թէ ի՞նչ ահաւոր է իր ըրածը, մանաւանդ՝ իր անգիտակցութիւնը:

Ասիկա ցոյց կու տայ, թէ մարդասիրութիւնը, մարդկութիւնը պարզապէս ո՞ր հասեր է նոր ժամանակներու մարդուն մէջ, այնքան, որ պարզ, շատ պարզ արարք մը, ինչպէս իր աճապարանքին մէջ այդ փոքրիկը շալկել, հետը առնել եւ օդակայանի ճամբուն վրայ շտապ-օգնութեան կայանը հասցնել, այդ մարդուն միտքէն չէ անցեր:

Միտքէն չէ անցեր, կը հասկնա՞ք:

Աւելի ծանրը սակայն այս բոլորին դիմաց, մանաւանդ երբ գիտակցութիւնը ունիք դէպքերուն ետին տեսնելու, ավելի ծանրը մեր անկարողութեան գիտակցութիւնն է:

«Ես Այդ Շունն Եմ» խորագրով գրութիւն մը ունի Պօղոս Սնապեան: Այսօր ատիկա կը յիշեմ, որովհետեւ միտքէս դուրս չի գար պատկերը երկու հսկայ շուններու, որոնք կը գգուրտին, մինչ փոքր շնիկ մը, անոնց շուրջ ցատկաւորով, կը հաչէ: Շուններէն մէկը, բարկացած, քրքրեալ մը կու տայ շնիկին եւ կը շարտէ գինք հեռու, ուր խեղճը հոգեվարք կ'ապրի, շունչը կտրած...

Այսօր, Ամերիկայի (Թուրքիայով ծպտուած) եւ Ռուսիոյ միջեւ այդ շնիկն է Յայաստանը, որ հիմա ոչ ոքի պէտք է ...

Ժամանակին Ամերիկան Թուրքիային գսպելու համար Յեղասպանութեան քարտը կ'օգտագործէր: Այսօր ԱՄՆ ճանչցեր է Յեղասպանութիւնը, որուն գինը Յայաստանը ինք կը վճարէ Արցախով: Ճանչցած չըլլար բարով, եթէ իր ճանաչումը Արցախ մը պիտի արժէր: Արցախը շա՛տ ավելի թանկ է, գոնէ մեզի համար ...

«Ես Այդ Շունն Եմ» այսօր, այո՛, դժբախտաբար:

ՔՈՒՒԹԱՀԱՅ...

Սկիզբ՝ էջ 8

Ապա, սրբազան հայրը օրհնեց եւ շնորհաւորեց մրցանակաբաշխութեան հիմնադիր քուէթահայ բարերար Կիրակոս Գույումճեանը, որ իր լուսնայէն, իր աշխատանքի արդիւնքէն, իր հոգիէն բաժին մը տալուն կողքին, Շնորհալիի մշակոյթը կը ջանայ փոխանցել աշակերտներուն, որպէսզի ծանօթանան հայրապետին հարուստ ժառանգութեան:

Մակար Սրբազան շնորհաւորելով ծնողները, ուսուցիչները, տնօրէններն ու աշակերտները ըսաւ. «Երախտագետ պէտք է ըլլայք նուիրատուին ո՛չ թէ միայն խօսքով, այլև աշխատանքով եւ նուիրումով, վառ պահելով ուսման ոգին ու մեր արժէքներու պահպանման նախանձախնդրութիւնը»:

Աւարտին, յիշատակի լուսանկարներ առնուեցան եւ տեղի ունե-

ցաւ կրկին հիւրասիրութիւն:

ԼՐԱԳՐԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 12

Եան հասանելիութեան տոկոսը, ինչպէս նաեւ տարբերութիւնը տպագիր կամ առցանց մամուլէն:

Ետքը տեղի ունեցաւ վարժողական աշխատանք: Իւրաքանչիւր մասնակցող լրատուութեան տեսակ մը պատրաստեց ու ներկայացուց, որմէ ետք տեղի ունեցան կարգ մը լրատուութիւններու բարձրաձայն ընթերցում եւ սրբագրութիւն:

Աւարտին, Շրջ. Վարչութեան ատենապետ Սիրան Ամպարճեան շնորհակալական խօսք ուղղեց Յրատարակչական Յանձնախումբի ընկերակիներուն, խոստանալով յաճախակիօրէն կազմակերպել նմանօրինակ շահեկան դասընթացքներ:

Սեմինարը փակուեցաւ ՍՕ Խաչի օրհներգով:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Գիլվբօշեան-Պօղիկեան
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիլվբօշեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ՔՈՒԷԹԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐ ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄԱԾԵԱՆ ԱՅՍ ՏԱՐԻ ԵՒՄ «ՆԵՐՍԷՍ ԸՆՈՐՀԱՎԻ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԸ ԿԸ ՑԱՏԿԱՑՆԷ 12-ՐԴ ԿԱՐԳԻ ՀԱՒԷՊԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒՄ

Կիրակի, 15 Հոկտեմբեր 2023-ին, հանդիսապետությամբ եւ ձեռամբ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, քուէթահայ բարերար Կիրակոս Գույումեանի կողմէ հաստատուած «Ներսէս Ընորհալի» ուսումնական մրցանակի տուչութիւնը կատարուեցաւ, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս:

Մ ր ց ա ն ա կ ը կը շնորհուի հալեպահայ վարժարաններու 12-րդ կարգի պետական լրացուցիչ քննութիւններուն առաջին երեք բարձրագոյն նիշերը ապահոված հայ ուսանողներուն:



Յիշեալ նախաձեռնութեան սրբազան հօր կողքին ներկայ գտնուեցան Առաջնորդի Օգնական Յոգշ. Ս. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Յոգշ. Ս. Արմէն Արզ. Գալաճեան, Ազգ. Վարչութեան անդամ Արմէն Գասպարեան, տեր եւ տիկ. Բենո Պետրոսեան, տեր եւ տիկ. ճարտարապետ Կարայիս Միլասեան, մրցանակին արժանացող ուսանողներն ու իրենց ծնողները, ինչպէս նաեւ Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարանի եւ Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանի տնօրէնութիւններու ներկայացուցիչներ, կրթական պատասխանատուներ, հայերէնաւանդ ուսուցչուհիներ եւ ԺԲ. կարգի ուսանողներ:



Բացման խօսք արտասանեց Մարիա Պողիկեան յայտնելով, որ Սրբոց Թարգմանչաց հպարտութիւն առթող տօնին համախմբուած ենք սրբազան հօր ձեռամբ կատարելու «Ներսէս Ընորհալի» ուսումնական մրցանակաբաշխութիւնը, որ այս տարի կը զուգահեռօք միջնադարու մեծ մտածող, բանաստեղծ, աստուածաբան, 12-րդ դարու հայոց կաթողիկոս Սուրբ Ներսէս Ընորհալիի մահուան 850-րդ տարելիցին եւ առիթ կը հանդիսանայ անմահացնելու հայրապետին անունը եւ անոր նման ստեղծագործ միտքով դէպի յառաջ ընթանալու:

Ան շնորհակալական խօսք ուղղեց բարերար արն. Կիրակոս Գույումեանին՝ հայ ուսեալ տարրը յառաջ մղելու իր ներդրումին համար եւ Բերիոյ Յայոց Թեմին զօրակցութիւնը յայտնեց հայ ուսանողներուն:



Գեղարուեստական յայտագիրը ընդգրկեց նուազ՝ Կոմիտաս վարդապետի ստեղծագործութիւններէն ընտրանի մը, որուն ճամբով ուսանողները իրամցուցին հայկական մշակոյթի հարուստ ժառանգութենէն գոհարներ: Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարանէն Ալպէրթ Ժազ Պողոսեան ջութակով մեկնաբանեց «Կռունկ»-ը, ապա Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարանէն Անդրանիկ Կիւլտալեան սրինգով մեկնաբանեց «Գարուն Ա» եւ «Զելէ՛, Զելէ՛» երգերու մեղեդիները:

Ընթերցուեցաւ «Ներսէս Ընորհալի» մրցանակի հիմնադիր եւ նուիրատու Կիրակոս Գույումեանի խօսքը, ուղղուած՝ 2022-2023 տարեշրջանի մրցանակակիր շրջանաւարտներուն: Բարերարը իր խօսքը ուղղելով աշակերտներուն կը հաստատէր. «Թէեւ ազգովին դժուարութիւններու հանդիպեցանք այս տարի ու կրեցինք մարդկային եւ տարածքային կորուստներ, սակայն քաջ գիտենք, որ ազգն ու հայրենիքը յառաջ մղելու մեր յոյսը դուք էք՝

տեսլական ունեցող երիտասարդութիւնդ, որովհետեւ տիրանալով բարձրագոյն ուսման, մասնագիտանալով գանազան ոլորտներու մէջ, մեր փայլուն ապագան կերտելու ճամբան պիտի հարթեք»:

Այս առիթով, ան կը շնորհաւորէր շրջանաւարտները, անոնց ծնողները, հայկական վարժարաններու տնօրէններն ու կրթական մշակները: Մեջբերելով Աւետարանի հետեւեալ խօսքը. «Իւրաքանչիւր ծառ իր պտուղէն կը ճանչցուի», ան դիտել կու տար, որ Յալեպի հայկական վարժարանները այն բերքառատ ծառերն են, որոնց պտուղներն են՝ շրջանաւարտները:



Այնուհետեւ, Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Սրբ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի ձեռամբ «Ներսէս Ընորհալի» ուսումնական մրցանակով պարգեւատրուեցան՝ Ա. Ալպէրթ Ժազ Պողոսեան 2890/2900 (Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարան) Բ. Յարութ Գարճեան 2875/2900 (Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդր. Վարժարան) Գ. Արեգ Արոյեան 2874/2900 (Ազգ. Զարէն Եփփէ Ծեմարան)

Այս առիթով մրցանակակիրներուն իր հայրական պատգամը ուղղեց սրբազան հայրը, ըսելով. ««Ս. Ներսէս Ընորհալի» մրցանակի բաշխման այս օրը կը զուգահեռօք Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց տօնին ու Ս. Ներսէս Ընորհալիի վախճանման 850-ամեակին: Դուք որպէս շրջանաւարտներ, երբ կը բացուիք համալսարանական ուսման, այս տօնական



օրերուն կը ներշնչուիք մեր սրբազան վարդապետներուն մեզի թողած աստուծոյ, պատգամով: Ս. Մեսրոպ եւ Ս. Սահակ Պարթեւ, իրենց 100 աշակերտներով, հիմնական քանի մը սկզբունքներով առաջնորդուած մեր ամբողջ պատմութեան ընթացքը փոխեցին: Անոնք կը տեսնէին, որ հայ ժողովուրդը չունենալով գիր, մշակոյթ, ենթակայ եր ծուլման: Մեր սուրբ վարդապետները յանձն առին գոհողութիւններ, մէկ կողմ ձգելով պալատական կեանքն ու իշխանութիւնը, հիմնուելով իրենց բարձր ուսման, հայու հոգիին, ժողովուրդին նկատմամբ սիրոյն վրայ: Անոնք յանձն առին գոհողութիւն՝ աւելի բարձր արժեքներ պեղելու ու անոնց հասնելու համար: Անոնք դարձան Յայաստան աշխարհին վրայ ճշդ խաւարին լուսաւոր մոմերը ու իրենց անկոտորում կամքով հայ գիրը ստեղծեցին ու հայ դպրոցիւնը հիմնեցին: Իսկ Ս. Ներսէս Ընորհալի հայրապետը որ 12-րդ դարու ամենէն նշանաւոր հայրապետներէն մէկն էր, իր ունեցած երաժշտական, ընկերաբարոյական, աստուածաբանական բազում շնորհներով, այլքան հասնեստ ու հեզ եղած է ու նուիրուած իր ազգին, որ այսօր դարեր ետք կը յիշենք զինք եւ պրն. Կիրակոս Գույումեանի հիմնած ու Ս. Ներսէս Ընորհալիի անունով մկրտած մրցանակը կը յատկացնենք ձեզի:

Այսօր բոլորս ինքնաքննութեան հրաւիրուած ենք, բացայայտելու որ մենք ի՞նչ կրնանք ընել, եւ այն ինչ որ կ'ընենք ի՞նչ հասկացողութեամբ կ'ընենք: Ի ցոյց մարդկա՞նց կ'ընենք, թէ իսկապէս հաւատքով, մեր նմանին, ազգին, հայրենիքին, եկեղեցւոյ, հոգեմտաւոր մեր արժեքներուն սիրոյն մղումով ու տագնապով կ'ընենք: Այդ սերն է, որ կը մղէ մեզ որ մեր հոգիէն տանք, մեր ժամանակէն տանք, մեր գրպանէն տանք ու մեր կեանքէն տանք:

Այսօր ուրախ եմ, որ կ'արժանանաք այս մրցանակին: Բայց մրցակցութեան ոգին թող ձեզ չմղէ պարզապէս մրցանակ առնելու, այլեւ նմանելու այդ տիտաններուն, մտածելու որ ի՞նչ կրնաք տալ ձեր ազգին, ձեր համայնքին:

Երբ հայկական վարժարաններէն շրջանաւարտ կը դառնաք, ձեր մէջ քանդակուած պէտք է ըլլայ հայու ոգին: Մենք հայու ոգիով տոգորուած երիտասարդներու պէտք ունինք մեր համայնքէն ներս: Դուք էք ապագայի յոյսը, ապագայի ուսուցիչները, առաջնորդներն ու եկեղեցականները: Յետեւաբար, այդ տիտաններու հոգին է, որ մեր մէջ պէտք է ընդունիւք եւ այդ ոգիով առաջնորդուիք»:

ՊԱՇՏՈՆԱՊԷՍ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ ԳՊՐԵՎԱՆՔԻ 2023-2024 ԿՐԹԱԿԱՆ- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԻՆ

Թարգմանչաց վարդապետաց տօնը կրկնակի ցնծության օր է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար, որովհետեւ կը յիշատակենք թէ՛ մեր հոգեւոր ու ազգային ինքնութիւնը աւելի ամրացնող սերունդին աւանդը եւ թէ՛ կը վերանորոգենք թարգմանչաց ուխտը՝ Դպրեվանքին կրթական-ուսումնական տարեշրջանի մեկնարկին ճամբով:



խուած ազգ: Այսօր, անոնք ընդհանրապէս մեր եւ յատկապէս Դպրեվանքի կեանքին մէջ պէտք է դառնան մեր կեանքի ճամբան լուսաւորող ուղեւիշեր, նշեց Յայրապետը:

Առ այդ, նախագահութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին, Կիրակի, 15 Հոկտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. Եւ Անմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Դպրեվանքի տեսուչ Հոգ. Տ. Պարոյր Վրդ. Ծերնեգեանը: Հոսկ, Վեհարանի դահլիճին մէջ, Դպրեվանքի սաներուն մասնակցութեամբ եւ հաւատացեալներու ներկայութեամբ, գեղարուեստական յայտագիրով մը տեղի ունեցաւ Դպրեվանքին 2023-2024 կրթական-ուսումնական վերամուտին պաշտօնական բացման հանդիսութիւնը, որուն ընթացքին Նորին Սրբութիւնը յղեց իր Յայրապետական պատգամը:

Իր պատգամին մէջ Յայրապետը ուրախութիւն յայտնեց ի տես Դպրեվանքին կրթական-ուսումնական նոր տարեշրջանի մեկնարկին՝ անգամ մը եւս շեշտելով, որ Դպրեվանքը իր էութեամբ ու կոչումով ամաքելութիւն է, որ իր հարկին տակ կը կոչի Աստուծոյ եւ ազգին ծառայողները՝ հոգեմտաւոր արժեքներով թրծուած:

Խօսելով թարգմանչաց վարդապետաց տօնի մասին, Նորին Սրբութիւնը դիտել տուաւ, որ թարգմանիչ սերունդը Աստուծոյ ներկայութիւնը թարգմանեց մեր ժողովուրդի կեանքին մէջ՝ հայացնելով մեր հաւատքը: Աւելին, թարգմանիչ վարդապետները իրենց իրագործումներով մեզի պարգեւեցին պատմութեան փոթորիկներուն դիմաց կանգուն մնալու ոյժը՝ իբրեւ ազգային ու հոգեւոր արժեքներով շաղա-

Կամրջելով անցեալը ներկային, Վեհափառ Յայրապետը կարեւորեց թարգմանչաց սերունդին տեսլականին շարունակականութիւնը ապահովող սերունդի մը պատրաստութեան իրամայականը: Վկայակոչելով իր Դպրեվանքի առաջին վերամուտին հանդիսութեան ընթացքին երջանկայիշատակ Տ.Տ. Չարեհ Ա. Կաթողիկոսին արտասանած պատգամը, ուր շեշտադրած էր առողջ նկարագրի կերտման իրամայականը, Արամ Ա. Կաթողիկոս ընդգծեց, որ ուսումնական վկայականը անիմաստ կը դառնան, երբ մարդուն մէջ կը պակսի վե՛տ նկարագիրը, իսկ Դպրեվանքի հիմնական ամաքելութիւնն է մարդուն մէջ նկարագրի կերտել՝ շողախուած Աստուծոյ, եկեղեցւոյ, հայրենիքին ու ազգին ծառայելու պատրաստակամ ոգիով:

Աւարտին, Յայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց տեսուչ հայր սուրբին, տեսչական եւ ուսուցչական կազմերուն, Դպրեվանքի բարերարներուն ու բարեկամներուն, որոնց անմիջական հսկողութեամբ ու աջակցութեամբ, Դպրեվանքը կը շարունակէ իրագործել իրեն վստահուած սրբազան ամաքելութիւնն ու կոչումը: Այս առիթով Յայրապետը աղօթք բարձրացուց առ Աստուած, որ իր երկնային բարիքներով, շնորհներով եւ օրհնութեամբ լեցնէ Դպրեվանքին կեանքը:

Դպրեվանքի 2023-2024 տարեմուտի բացման հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Յայրապետին «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» օրհներգի ու Դպրեվանքի քայլերգի միաբերան երգեցողութեամբ:

ԱՅԳ ՔԱՐԵՆԵՓՈՒԷ...

Սկիզբ՝ էջ 12

համայն գաւակներուն ապահովեցին հայ ժողովուրդին յաւերժութիւնը: Աստուածաշունչի թարգմանութեամբ հայ ժողովուրդը սկսաւ Աստուծոյ հետ իր մայրենի լեզուով խօսիլ եւ աղօթել», հաստատեց ան:

Խօսքը ուղղելով աշակերտներուն, Յայր Սուրբը ըսաւ. «Դուք էք մեր ապագայ սերունդը, հայերէն լեզուի իւրաքանչիւր տառը, մեր մշակոյթը, լեզուն, գիրն ու գրականութիւնը պահողները: Օտարը կու գայ եւ կը փորձէ լեզուն ոչնչացնել, սակայն դուք եւ բոլորս գանձակա պիտի անամհացնենք»: Հետեւաբար, ան պատուիրեց ուսանողներուն, որ


հմուտ դառնան հայերէն լեզուի գործածութեան, հայ մշակոյթի ռահվիրաներ եւ հայ ազգի պահպաններ ըլլան:

Պատարագէն ետք, Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ, ի յիշատակ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի հիմնադիրներուն՝ երջանկայիշատակ Չարեհ Ա. Կաթողիկոսին եւ օրդ. Զարէն Եփփէին:

Աւարտին, աշակերտները եւ բոլոր ներկաները ուղղուեցան դէպի Ազգ. Գերեզմանատուն, ուր ծաղկեպսակներ գետեղեցին օրդ. Զարէն Եփփէի եւ մեծանուն գրող Յակոբ Օշականի շիրիմներուն վրայ եւ մոմավառութիւն կատարելով աղօթեցին հայոց հայրենիքին՝ Յայաստանի խաղաղութեան եւ հայ ժողովուրդի բարօրութեան համար:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

ԴԱՐՁԵԱԼ... ՄԱՆԿՈՒԹԻՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ




Արփի Արապանեան

Չէի փափաքեր, որ գրութիւնս այսպիսի խորագիր մը կրեր, սակայն դժբախտաբար այսօր դար մը ետք պատմութիւնը անգամ մը եւս ինքզինք կը կրկնէ: Հայ ժողովուրդը դարձեալ մատնուած է Տանթեական խուճապի, իսկ համայն աշխարհը՝ այս մասին համրացած կը դիտէ միայն: Արցախահայ երիտասարդութեան կեանքի գարունը՝ ձիւնով ծածկուած ճմրան կը վերածուի, իսկ անմեղ մանուկները կ'ապրին մահուան ահուսարսափով, սպասելով արեւածագի՞ն թէ մայրամուտին, որուն հետ իրենց արեւն ալ մար պիտի մտնէ: Անդին, ամբողջ աշխարհ մը չէ հետաքրքրուած այս անմեղներու գոյութեամբ իսկ, եւ որեւէ փորձ



չի կատարեր դադրեցնելու 21-րդ դարու ցեղասպանութիւնը: Անոր համար ի՞նչ կը նշանակէ մանուկի մը վախազդու կեանք ապրիլը, արժէք չունի անոր որբանալը կամ անտուն ու անտեղ դառնալը, երբ ատիկա չի վնասեր հսկայ պետութիւններու տնտեսութեան կամ ներդրութեան չի պատճառէր անոնց ժողովուրդին: Իսկ թշնամին... բաւարար բառեր չկան անոր ոճրագործութիւնն ու անգթութիւնը անգամ մը եւս պատկերելու:

Այսքան բաւարար է՝ Դարերով տառապանք կրած ժողովուրդին, Յեղասպանութեան ենթարկուած սակայն գոյատեւած եւ վերականգնած ազգին վերջին էջը պիտի չըլլայ այս մէկը, այլ՝ նորօրեայ պայքարի շեփորը:




**ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ՆԱԽԱՆՆԵՐՆԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՆՆՋԵՑՅԵԱԼՆԵՐՈՒ
ՀՈԳԻՆԵՐՈՒՆ**

Նախանձեռնութեամբ՝
Համազգայինի Սուրբոյ Շրջ. Վարչութեան

Կիրակի, 29 Հոկտեմբեր 2023-ին, Սրբ. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Սուրբ եւ Անմահ Պապարագին, Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝ Համազգայինի հին եւ նոր ննջեցեալներու հոգիներուն խաղաղութեան համար:
Հոգեհանգստեան արարողութենէն ետք, հոգեսուրճ պիտի մատուցուի «Նիկոլ Աղբալեան» սրահէն ներս:
Համազգայինի Սուրբոյ Շրջ. Վարչութիւն

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

**Հանգուցեալ
ԽԱԺԱԿ ՏԻԼ ՊԵՐԵԱՆԻ**



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 22 Հոկտեմբեր 2023-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալեպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահը:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Համբերութեամբ պիտի յաղթահարէք ձեր դժուարութիւնները: Մի՛ վիատիք, այլ դիմադրութեան պատրաստ եղէ՛ք:



Ցուլ

Ամուր յարաբերութիւններ պետք է մշակէք ձեր շուրջիներուն հետ: Ամէն հարց պիտի լուծուի եւ դուք պիտի հանգչիք:



Երկուորեակ

Ուշադրութիւն դարձուցէ՛ք ձեր ընտանիքի անդամներուն, որոնք անկեղծ ու բարի են: Պետք է գնահատէք զանոնք:



Խեցգետին

Մանր-մուկր վեճեր պիտի ծագին: Պետք է հասկնաք, որ խտալական յարաբերութիւններ գոյութիւն չունին:



Առիւծ

Նախանձելի էք, այդ պատճառով ալ բամբասանքի պիտի ենթարկուիք: Ձեր զգացումներուն տիրապետեցէ՛ք, որ չսխալիք:



Կոյս

Սիրային արկածախնդրութիւն մը պիտի ունենաք: Ձեր բարի արարքներուն շնորհիւ գնահատանքի պիտի արժանանաք:



Կշիռք

Ուշադրութիւն կեդրոնացուցէ՛ք ձեր առողջապահական հարցերուն: Ժամանակն է, որ արժեւորէք դուք ձեզ:



Կարիճ

Կարճ ճամբորդութիւն մը կրնայ կազդուրել ձեզ: Ձեր սիրելիներուն հետ հաճելի ժամանակ պիտի անցընէք:



Աղեղնաւոր

Անձանօթ մը պիտի օգնէ ձեզի եւ յաջողութեան պիտի առաջնորդուիք: Լաւատես եղէ՛ք եւ մի՛ յուսահատիք:



Այծեղջիւր

Ձեր երազները պիտի իրականանան վերջապէս: Առօրեայէն դուրս եկէ՛ք եւ անելի հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք ձեր շուրջիներուն նկատմամբ:



Ջրհոս

Ձեր գուզընկերոջ հետ երկար ժամանակ գրուցեցէ՛ք մինչեւ հասնիք ճշգրիտ լուծումի: Անսպասելի անակնկալ մըն ալ պիտի ունենաք:



Ձուկ

Անհրաժեշտ է, որ անելի գուսալ ըլլաք վեճերուն ընթացքին: Ձեր բարեկամներուն կարծիքները յարգեցէ՛ք եւ հասկացողութիւն ցուցաբերեցէ՛ք:



ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ՈՐՔԱՆ ՄԱՐԴ Կ'ՕԳՏՈՒԻ ԲԶԻՋԱՅԻՆԻ ԿԱՌԷՆ



GSMA-ը (Բջիջայինի յատուկ համաշխարհային կազմակերպութիւն) հրապարակած է բջիջային առցանց կապի մասին 2023-ի գեկոյցը: Փաստաթուղթին համաձայն՝ աշխարհի տարածքին խելացի հեռաձայն (սմարթֆոն) ունի 4,3 միլիարդ մարդ, որ կը կազմէ մոլորակի ընդհանուր բնակչութեան 55%-ը: Բջիջային առցանց կապէն օգտուողներուն թիւը կը կազմէ 4,6 միլիարդ համացանց կը մըտնէ խելացի հեռաձայններու միջոցով:

GSMA-ի գեկոյցին մէջ կը յիշուի, որ հիւսիսային Ամերիկայի եւ Արեւելեան Ասիոյ խեթացի հեռաձայններու սեփականատէրերու 69%-ը ունի 4G կապին միացած սարքեր, միւսը՝ Ափրիկէի եւ Միջին Արեւելքի օգտատէրերու մեծ մասը կը շարունակէ օգտագործել 3G ցանց: Շարժական համացանցը տակաւին աշխուժօրէն կը տարածուի, սակայն շուրջ 3,4 միլիարդ մարդ տակաւին հասանելիութիւն չունի կապի այս տեսակին: Աշխարհի բնակչութեան 38%-ը կ'ապրի այն տարածաշրջաններուն մէջ, ուր առկայ է բջիջային համացանց, սակայն չ'օգտուիր ատկէ: Սահարայէ հարաւ գտնուող Ափրիկէի բնակչութեան 59%-ը եւ հարաւային Ասիոյ բնակչութեան 52%-ը համացանցի հասանելիութիւն չունին: Զեկոյցին մէջ կը յիշուի նաեւ, որ սովորական բջիջային հեռաձայններուն՝ ոչ խելացի հեռաձայններուն միջոցով համացանցէն կ'օգտուի 600 միլիոն մարդ, կամ աշխարհի բնակչութեան շուրջ 8%-ը: Բջիջային հեռաձայններէն օգտուողներուն թիւի ընդլայնման խոչընդոտները կը ներառեն անբարար թուային հմտութիւններ, անգրագիտութեան, անվտանգութեան հարցեր եւ համապատասխան բովանդակութեան առկայութիւնը: Կապի բացակայութիւնը միլիառաւոր մարդիկ կը զրկէ կենսական ծառայութիւններէն օգտուելու կարելիութենէն՝ սրելով յատկապէս աղքատ եւ անուս բնակչութեան արդէն իսկ ծանր վիճակը:



ԴԵՄՔԻ ԽՆԱՄՔ

Տեսաբար լաւ տեսք ունենալու համար անհրաժեշտ է ոչ միայն ճիշդ ձեւով օգտագործել դիմայարդարման միջոցները, այլեւ հարկ է լաւապէս վերացնել զանոնք դէմքէն ու մաշկը մաքրել: Երբեք մի՛ յետաձգէք դիմայարդարումը մաքրելու ամենօրեայ աշխատանքը: Դէմքը օճառով եւ ջուրով մի՛ մաքրէք: Փոխարէնը օգտագործեցէ՛ք դէմքը մաքրելու համար նախատեսուած յատուկ միջոցներ: Ջուրին մէջ առկայ խառնուրդները, ինչպէս նաեւ օճառի բաղադրութեան մէջ մտնող քիմիական նիւթերը դէմքի ցուկներուն, փոշիին եւ աղտին հետ փոխազդեցութեան մէջ մտնելով՝ կ'առաջացնեն չլուծուող նիւթեր, որոնք կը փակեն մաշկին ծակտիկները, չեն թողուր, որ մաշկը շնչէ, յառաջացնելով բորբոքում կամ գրգռուածութիւն: Այս վնասակար յատկութիւններէն զերծ կը մնան դէմքի մաքրման համար նախատեսուող հեղուկները:

Մարզական




Ռաֆֆի Սիկանյան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ աղջկանց պասքեթի հաւաքականի խաղացող Ալիսիա Մա- կարեան երկու տարուան պայմա- նագիրով միացաւ Լաթաքիոյ Զըթ- թին խումբին: Սուրիոյ պասքեթի վերջին տարիներու լաւագոյն մար- զուհի Ալիսիան, որ իր մարզական կեանքը սկսաւ Զալէպի ԶՍԸՄ-ի կազմին հետ, մաս կազմած է նաեւ Դամասկոսի Ռահտե եւ Սաուրա ակումբներուն եւ անոնց հետ տի- րացած է Սուրիոյ ախոյեանութեան, ինչպէս նաեւ ընտրուած է արաբա- կան երկրի լաւագոյն մարզուհի:



ALICIA MAGARIAN

- Սուրիոյ պասքեթի հաւաքա- կանի եւ Ռահտե ակումբի պասքե- թի խաղացող Օմար Իտլիպի քա- նի մը ամիսներով պիտի բացակա- յի մրցումներէն, Լիբանանի մէջ տե- ղի ունեցած բարեկամական մրցա- շարքի մը ընթացքին ծանր վնասուածք մը կրելուն պատճառով:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ՄԻՆԱՍԵԱՆ ԱՐԺԱՆԱՅԱՄ ՈՍԿԵ ՄԵՏԱԼԻ

Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ Նարեկ Մինասեան դարձաւ Եւրոպայի գաւաթի անդ- րանիկ խաղարկութեան ոսկե մետա- լակիր:



Մոնթենեկոյի Պուստօ քաղա- քին մէջ ընթացող Եւրոպայի գաւա- թի խաղարկութեան 92 քկ. ծանրու- թեան կարգի եզրափակիչին Մինաս- տեանի մրցակիցն էր Իտալիոյ Ազիզ Ապպա Մուհիլըտտինը: Իտալացի բռնցքամարտիկը վնասուածքի պատճառով չներկայացաւ մենամարտի ու յաղթանակը շնորհուեցաւ հայ մարզիկին:

ԲՈՆՁՔԱՄԱՐՏԻԿ ՈԱՖԱՅԵԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ ԴԱՐՁԱՄ ԵՐՈՂՊԱՅԻ ԳԱՎԱԹԻ ՊՐՈՆՁԵ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ Ռաֆայել Յովհան- նեսեան դարձաւ Եւրոպայի գաւաթի պրոնզե մետալակիր: «Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ Մոնթենեկոյի Պուստօ քաղաքին մէջ ընթա- ցող առաջնութեան կիսաեզրա- փակիչ մենամարտին 86 քկ. ծանրութեան Ռաֆայել Յով- հաննեսեան մրցակից ունեցաւ Պուկար մարզիկ Ալեքսեյ Ալֆիոռաուի հետ: Հայ բռնցքա- մարտիկը գիշեցաւ մրցակիցին՝ դառնալով Պրոնզե մետալա- կիր: Նախապէս Հայաստանի հաւաքականի մարզիկ Բարեղամ Յարութիւնեան մրցած էր Պուկար Երզրուսալ Սեբաստիանին հետ եւ պարտութեան մատնուած էր 4 - 1 հա- շուով: Յարութիւնեան դարձած էր Եւրոպայի գաւաթի խաղարկութեան պրոնզե մետալակիր: Իսկ մինչեւ 54 քկ. ծանրութեան կարգի հանդէս եկող Ռուսլան Ասիկեանի մրցակիցը դարձաւ ռուս ներկայացուցիչ Մաքսիմ Կուզնետցով, որ դարձեալ պարտուելով արժանացաւ Պրոնզե մետալի:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 460)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբոջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1									■			
2		■			■					■		
3							■		■			
4												
5			■									
6							■					
7	■										■	
8		■										■
9								■		■		
10											■	
11			■						■			
12												

Հորիզոնական

- 1- Օտար տեղեր բնակող: Հնարք:
- 2- Մարմինը՝ մէջքէն վեր, առանց թելերուն ու գլուխին: Երկբարբառ:
- 3- Ընէն պահող: Աշակերտ:
- 4- Հակառակ՝ գաղթող թռչուն մը: Ձայնակիչ: Հակառակ՝ իգական անուն:
- 5- Հակառակ՝ 75: Կրկնուած ձայնաւորներ: Ոչ վնասակար:
- 6- Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Մի՛ ձգեր որ մտածու- մէն առաջ վազէ»: Ձայնակիչ:
- 7- Հակառակ՝ տարի: Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրը:
- 8- Սքանչելի:
- 9- Եագուպիէի եկեղեցւոյ իրաշագործ սրբուհին: Հակառակ՝ անձնա- կան դերանուն: Սարսափ:
- 10- Վահան Փափագեանի ծածկանունը: Հակառակ՝ պատրանք:
- 11- Տարածքի միաւոր: Յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ քաջ:
- 12- Ամենէն առաջ: Հայերէն լեզուի տրոհումի կետադրական նշաննե- րէն:

Ուղղահայեաց

- 1- Փշրել: Իշխանութեան գաւազան:
- 2- Խելացի: Իգական անուն:
- 3- Եւս: Տառի մը անունը: Հակառակ՝ տառի մը հարեանները:
- 4- Ռումբի տեսակ: Կրկնուած ձայնաւորներ: Եկամուտ:
- 5- Գետեզրի վրայ կախուող ճիւղերով ծառ: Հարցական դերանուն:
- 6- Նեղոս գետի արաբերէն անունումը: Խօսք:
- 7- Տարածքի միաւոր: Ձայնակիչ: Անշարժ:
- 8- Սիւնիքի մարզի քաղաքներէն: Հակառակ՝ անձնական դերանուն: Գա- գանի բոյն:
- 9- Իգական անուն:
- 10- Դատարկ: Հակառակ՝ փոքրացնող մասնիկ: Հակառակ՝ ոտքի հա- րուած:
- 11- Յագենալ: Տառի մը անունը:
- 12- Գիշատիչ գազան: Արեգակի մոլորակներէն մէկը:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 459)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	յ	ի	■	պ	ա	տ	կ	ա	ն	ա	ն	ք
2	ա	լ	ի	տ	ա	լ	ի	ա	■	ա	ա	ա
3	ն	ի	ս	տ	■	դ	■	հ	ի	մ	ն	
4	կ	կ	■	ա	յ	թ	ի	■	տ	ա	ք	
5	ն	■	ա	ն	■	կ	ի	■	կ	■	ա	
6	թ	■	ի	ս	կ	■	■	ք	ն	ա	ք	
7	գ	դ	■	■	լ	■	■	ն	■	■	ա	
8	■	ս	■	ն	կ	■	■	դ	■	ի	■	
9	մ	ա	ն	ք	■	■	■	■	■	■	■	■
10	ն	ք	փ	ն	ն	ք	ա	ն	գ	■	տ	ք
11	ք	■	■	■	■	կ	■	■	■	■	ի	■
12	թ	ա	կ	■	■	պ	■	■	■	■	ն	■

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի
23/10



16° 31°

Երեքշաբթի
24/10



15° 30°

Չորեքշաբթի
25/10



16° 30°

Հինգշաբթի
26/10



13° 26°

Ուրբաթ
27/10



14° 27°

Շաբաթ
28/10



14° 27°

Կիրակի
29/10



14° 29°

ԱԶԳ. ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈՎ ԹԱՓՈՎ ՈՂԵՎՈՉԵՅԻՆ ՍՐԲՈՅ ԹԱՐԳԱՆՉԱՅՑՈՆԸ

Սրբոց Թարգմանչաց վարդապետներուն տօնը, հայ ժողովուրդին ինքնութիւնը հաստատող եւ նոր մարտահրաւերներուն դիմաց զգաստութեան եւ արթնութեան հրաւիրող նուիրական տօներն մէկն է:

Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Յոգշ. Տ. Արմէն Աթղ. Գալաճեան:

Անդրադառնալով հայ գիրերու գիտին եւ թարգմանչաց շարժումին, Յայր Սուրբը դիտել տուաւ, որ



Արդարեւ, հանդիսապետութեամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանի, Ազգ. Քարեն Եփփե Ճեմարանի աշակերտները

թարգմանիչ վարդապետները, հակառակ տիրող դժուարին կացութեան, հետեւողական աշխատանքով եւ ջերմեանով արթնութեամբ կարողացան իրենց լաւագոյնը կատարել



Սուրբ եւ Ամմահ Պատարագով ողբկոչեցին Սրբոց Թարգմանչաց տօնը, Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2023-ի առաւօտուն, հայակերտումի դարբ-

այահպանելու համար հայկական ինքնութիւնը, մեզի կտակելով հայ ժողովուրդի գոյատեւման համար հարկաւոր ամենէն ազդու եւ հզօր



նոց Ազգ. Քարեն Եփփե Ճեմարանի շրջափակէն ներս, ներկայութեամբ՝ Ազգային Վարչութեան անդամներ երկրչփ. Յարութեան Արմէն Գասպարեանի, թեմի հոգեւորականաց դասուն, Ճեմարանի ինսամակալութեան, տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտներուն:

զէնքերէն մէկը՝ հայոց Այբուբենը: Յայր Սուրբը անհրաժեշտ նկատեց խօսքերէն եւ լոզուքներէն անդին գործօն մասնակցութեամբ կառչիլ մեր ազգային բարքերուն, ասանդութիւններուն եւ լեզուին:

«Թարգմանիչները մեր ազգի Մարինա Պողիկեան
Շաբ.՝ էջ 9»

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐ

Նկատի ունենալով, որ մամուլն ու գանազան լրատուամիջոցները լայնօրէն մուտք գործած են մեր առօրեային մէջ եւ իրենց ազդեցութիւնը կը թողուն մեր մտածելակերպին եւ քայլերուն վրայ, 6-7 Հոկտեմբեր 2023-ին Սուրիահայ Օգնութեան Խաչի Ընկերաբժշկական Կեդրոնի «Գ. Յամալեան» սրահէն ներս ընթացք առաւ ՍՕ Խաչի Յրատարակչական Յանձնախումբին Նախածեռնած լրագրութեան երկօրեայ սեմինարը, մասնակցութեամբ ՍՕ Խաչի Նստավայրի մասնաճիւղերու,

Երրորդ դասախօսն էր Յրատարակչական Յանձնախումբի անդամ Թային Մինասեան: Ան ներկայացուց «գովազդ» կամ «ծանուցում» հասկացողութիւնը, դիտել տալով որ ծանուցումը երկու նպատակ կը հետապնդէ՝ աշխատանքի քարոզչութիւնը կատարել ու հրաւիրել մասնակցութեան, իսկ տնտեսական հաստատութիւններու պարագային արտադրութեան վաճառքը խթանել: Ապա Մինասեան թուեց յաջող գովազդի յատկութիւնները:

Սեմինարի երկրորդ նիստը տե-



Շրջ. Վարչութեան ներկայացուցիչներու, իսկ ՉՈՒՄ հարթակով Զեսապի մասնաճիւղի անդամուհիներու եւ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչին: Սեմինարը բացուեցաւ ՍՕԽ-ի քայլերգով, ապա մասնակիցները մէկ վարկեան յոտնկայս յարգեցին Արցախի Նահատակներուն յիշատակը:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեան, յայտնելով որ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը «Գանձասար» շաբաթաթերթին մէջ պիտի ունենայ իր յատուկ էջը, ուր ամսական դրութեամբ պիտի ներկայացուին ՍՕ Խաչի մասնաճիւղերուն ու շրջանային յանձնախումբերուն յատկանշական գործունեութիւնները: Սոյն ծրագիրը գործնականի վերածելու եւ ճշգրիտ տուեալներով գործի սկսելու համար որոշուեցաւ լրագրական երկօրեայ դասընթացքի մը Նախածեռնել:

Սեմինարի առաջին դասախօսն էր ՍՕ Խաչի վաստակաշատ ընկերուհի Յոյի Կանանեան, որ անդրադարձաւ քարոզչական աշխատանքի նպատակին: Կանանեան յայտնեց, որ քարոզչական աշխատանքը անհրաժեշտ է ժողովուրդին մօտ վստահութիւն եւ հետաքրքրութիւն ստեղծելու, մօտեցնելու գայն մեր միութեան, որպէսզի օգտուին միութեան մատուցած ծառայութիւններէն:

Այնուհետեւ «Գանձասար»-ի խմբագիր Չարմիկ Պօղիկեան ներկայացուց տպագիր եւ առցանց մամուլը, անդրադարձաւ մամուլի կարեւորութեան, որ կը միտի բարձրացնել հասարակութեան իրազեկութեան մակարդակը եւ կարծիք ձեւաւորել: Ապա անդրադարձաւ լրագրութեան ոճին եւ լեզուին ու պարզեց լրագրողին հմտութիւններն ու յատկանիշները:

դի ունեցաւ Շաբաթ 7 Հոկտեմբեր 2023-ին: Դասախօս Հոյի Կանանեան ներկայացուց «Սուրիահայ մամուլի համառօտ պատմութիւնը» Յալեայի առաջին տպագիր թերթէն, մինչեւ Բերիոյ Յայոց Թեմի «Գանձասար» պաշտօնաթերթ: Ան անդրադարձաւ իւրաքանչիւր թերթի բնոյթին, բովանդակութեան, խմբագիրներուն եւ այլն: Աւարտին լուսարձակի տակ առաւ սփիւռչահայ մեր կեանքին մէջ հայ մամուլին կարեւոր դերը:

Ապա տեղի ունեցաւ գործնական աշխատանք «լուսանկարչութիւն» խորագրով, գոր վարեց լուսանկարիչ Պերճ Պօղիկեան: Պօղիկեան կարեւորութեամբ անդրադարձաւ լրատուութեան մէջ լուսանկարի եւ ընդհանրապէս պատկերի ազդեցութեան, բացատրեց լուսանկարելու հիմնական սկզբունքներն ու լրատուութեան համապատասխան լուսանկարի ընտրութեան կարեւորութիւնը, ապա ճիշդ ու սխալ լուսանկարներու համեմատութիւն կատարեց՝ գործնական աշխատանքի մղելով մասնակիցները:

Այնուհետեւ ձայնասփիւռի հաղորդումներ՝ «radio» նիւթը ներկայացուց Ամժելա Չաղլասեան, որ ներկայացուց ձայնասփիւռային աշխատանքի բնոյթն ու դերը լրատուութեան մէջ, «Ռատիօ Երագ»-ի սփռուող յայտագիրներուն եւ ուղիղ եթերի մասին խօսեցաւ ու պարզեց հաղորդումներու նախապատրաստական աշխատանքը:

Սեմինարի վերջին դասախօսութիւնը ներկայացուց Չարմիկ Պօղիկեան: Ան խօսեցաւ պատկերասփիւռային յատկապէս լրատուական հաղորդումներու մասին, պարզեց պատկերասփիւռային հաղորդումներու առաւելութիւնները, հանրութեան

Սոնա Ճարպիկեան
Շաբ.՝ էջ 7»